


2 ne u ae p z uely

I



1927

191.99-8

5-28

ԼՈՒՍԱՐՁԱԿ

ԿԱԶՄԵՑ ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



Ա. ՏԱՐԻ

ԼՈՒՍԱՐՁԱԿ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Կ ա գ մ ե ց

ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Յերրորդ վերամշակված տպագրություն





1. Տ ո ն

Մենք այբբենարանն ավարտելուց հետո տոն
կազմակերպեցինք: Դասարանը լավ զարդարեցինք:
Աշակերտների աշխատանքները սեղանների վրա եյին,
վոր յեկողները տեսնեն:


Շատ մարդիկ եյին յեկել:

Դուրս յեկավ Զաքարը. զեկուցում տվեց մեր
աշխատանքների մասին:

Ասեց, վոր 6 եքսկուրսիա յենք ունեցել, հինգ
վոտանավոր ենք սովորել: Թվաբանությունից մինչև
10-ը բոլոր գործողությունները գիտենք:


Հետո մենք կարդացինք և թերթիկների վրա

ամեն մեկս գրեցինք մեր անունը, ազգանունը և տարիքը:



Վերջը խմբով վոտանավորներ ասացինք:

- Դուք ել այդպիսի տոն կազմակերպել եք:
- Պատմեցեք՝ ինչպես անցավ ձեր տոնը:



2. Գրագետ

Սուրենը նստած եր սեղանի առաջ. գիրք եր կարդում: Վարդանը մոտենում և ու հարցնում.

- Կարդալ գիտե՞ս:
- Գիտեմ, — պատասխանում և Սուրենը, — լավ

եմ կարդում: Ավելի լավ կկարդայի, բայց կետերը խանգարում են:

— Ձեզ ել խանգարում են կետերը:



3. Առաջին ձյունը


Վայ, մայրիկ ջան, տես, բալն ու դուռը լի, ինչքան սպիտակ թիթեռ և գալի: Եսքան շատ թիթեռ չեմ տեսել յես դեռ:

Թիթեռներ, չեն եղ. թիթեռներն անցան ծաղիկների հետ: Եզ ձյունն և գալի, փաթիլն և ձյունի, վոր կարծես սպիտակ թիթեռնիկ լինի:

4. Չմեռ

Չմեռ և: Սար ու ձոր սպիտակ են հագել:

— Ղա՛, ղա՛, ղա՛ — մի բարձր տեղ կանգնել ու կռավում և ագռավը:




Ամենքը ձայները կտրել են, մտել իրենց տունն ու բունը: Միայն յերեսաներն են, վոր ամբողջ որը հաց ու ջուր մոռացել, ձնագնդի յեն խաղում և իրիկունը ձեռներին փչելով վերադառնում տուն:

— Նկարեցեք ձմռան տեսարաններ:

5. Յե՛րբ ե յիևում

Ձյուն կա դաշտերին,
սառույց գետերին.
բուրն ե հեծեծում,
դռները ծեծում:
Այս յե՛րբ ե լինում:

6. Մեր կազմակերպությունը



Հնդհանուր ժողով
արինք:

Որպահաների համար
կանոններ մշակեցինք:

I. Առավոտները բաց
անել ողանցքները:

II. Կավիճ պատրաս-
տել, թանաքամանները
թանաք լցնել:

III. Դասամիջոցին
հետևել, վոր աշակերտ-
ները դուրս գան բակը:

IV. Ծաղկամանները ջրել:

V. Դասերից հետո դասարանը կարգի բերել:

Դուք դասարանում կազմակերպություն ունեք:

7. Մեր որստետրից

Մենք վորոշեցինք դիտել ձմռան գալը:
Կենդանի անկյան հերթապահները պետք ե դիտեն
ու գրեն, թե՛

1. Յե՛րբ ե առաջին ձյունը յեկել:

2. Յե՛րբ ե սառել գետը:

3. Ի՞նչ թռչուններ են մնում ձմռանը մեզ մոտ:

8. Հնտանիքը



Չարիկին մի անգամ
հարցրին. «Ձեր տանե-
ցիք ո՞վքեր են»:

Նա յել պատասխա-
նեց՝ մեկ-մեկ մատը
ծալելով. — «Հայրիկս,
մայրիկս, տատիկս,
յերկու յեղբայրս՝ Կա-
րենն ու Գուրգենը, մեր
փիտոն. հա՛, բիշ մնաց՝
մոռանայի, մեկ ել մեր
Բողարը: Ես ել յես»:

Վերջացրեց Չարիկը՝ մի մատ ել ծալելով:

— Չարիկի պատասխանը ճիշտ ե:

— Ձեր ընտանիքի անդամներն ա՞վելի՞ յեն, թ՞վեցե՞ք:

9. Հոր ոգևականը

— Գիտե՞ս ինչ, հայրիկ, կամ դո՛ւ անտառ գնա
փայտի, յես տանը մնամ, կամ յես տանը մնամ, դու
գնա անտառ փայտի:

— Դուք ել եք այդպես ոգնում ձեր տանը:

10. Խեղոք հաշիւ

Մի տղա կանգնել եր փռան առջև ու ախորժակով նայում եր տաք-տաք բլիթներին:

Ներսէ մտնում ու հարցնում.

— Ի՞նչ արժեք բլիթը:

— Վեցը՝ հինգ կոպեկ:

— Վեցը՝ հինգ կոպեկ, հա՛. ուրեմն հինգը՝ չորս կոպեկ, չորսն ել՝ յերեք կոպեկ, յերեքը՝ յերկու, յերկուսը՝ մեկ, իսկ մեկն՝ անփող: Մեկն ինձ հերիք ե. տվէք ինձ մեկը:

11. Հնարք

— Քնիր, բալիկս, քնիր, —ասում ե մայրը յերեխային, —հանգիստ քնիր:

Պառկեցնում ե, վոտքերը ծածկում ու գնում:

Հսում ե յերեխայի լացը: Շփոթված յետ ե գալիս:

— Ինչո՞ւ յես լալիս, բալիկս, ինչո՞ւ:

— Դիտմամբ եմ լալիս, վոր գիշերը, յերբ վերմակս ընկնի, լաց չլինեմ:

12. Կենդանի անկյուն

Մեր կենդանի անկյունում արկղների ու ծաղկամանների մեջ բույսեր կան, ծաղիկներ, փոքրիկ վարդի թուփ:

Մեծ, յերկար արկղում մենք զանազան սերմեր ենք ցանել. վանդակներում փոքրիկ թռչուններ կան:

Մի մեծ վանդակում ել նապաստակ կա: Այդ վանդակի մոտ միշտ խմբվում են աշակերտները:

— Առ կէր, ես քեզ կաղամբ, ես ել գազար, ի՞նչ ես վախենում, —ասում եյին աշակերտները:

Բայց նապաստակը յերկար ազանջները ցցած միշտ դողում եր:

Կենդանի անկյան հերթապահը բույսերը պետք ե ջրի, վանդակները մաքրի, կենդանիներին կերակրի:

— Կենդանի անկյուն ունե՞ր դուք:

— Թե չունեք, կազմեցե՞ք:

— Դիտեցե՞ք բույսերը և կենդանիները ու գրի առե՞ք:

— Նկարեցե՞ք ձեր կենդանի անկյունը:

— Կավից նապաստակ, մուկ պատրաստեցե՞ք:

— Գունավոր թղթից նապաստակ, մուկ կտրեցե՞ք:

13. Ընտանի կենդանիներ յեւ վայրի գազաններ

Ընտանի կենդանիներ են՝

Ձին, կովը, չեղը, գոմեշը, այծը, վոշխարը, խոզը, կատուն, շունը:

— Ուրի՞շ:

Վայրի գազաններ են՝

Գայլը, աղվեսը, արջը, սկյուռը, նապաստակը, բորենին:

— Ուրի՞շ:



Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

1. Ձեր տանը քանի՞ կով, ձի, յեղ և վոչխար կա:
2. Ընդամենը քանի՞ գլուխ կենդանի կա:
3. Քանի՞ հավ, բադ, սագ ունեք:
4. Ընդամենը քանի՞ ընտանի թռչուն ունեք:

1. Ձեր գլուղում քանի՞ կով կա:
2. Քանի՞ հորթ կա ձեր գլուղում:
3. Ընդամենը քանի՞ հորթ ու կով կա ձեր գլուղում:
4. Մի կովն որական ի՞նչքան խոտ է ուտում:
5. Հինգ կովն որական ի՞նչքան խոտ կուտեն:
6. Մի կովը հինգ որում ի՞նչքան խոտ կուտի:

14. Ով ինչ է ուտում

Ո՞վ է խոտ ուտում.

— Կովը, եղը, վոչխարը: Ե՛լ Ո՞վ:

Ո՞վ է միս ուտում.

— Շունը, գայլը: Ե՛լ Ո՞վ:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչպես պետք է ձին ջրել:
2. Ի՞նչպես պետք է ձին թիմարել ու մաքրել:
3. Ի՞նչ գույնի ձիեր կան:
4. Մի ժամում ձին քանի՞ կիլոմետր է անցնում:
5. Մարդը մի ժամում քանի՞ կիլոմետր է անցնում:
6. Յերկու ժամում ձին քանի՞ կիլոմետր կանցնի:
7. Իսկ մարդը:
8. Դուք մի ժամում քանի՞ կիլոմետր եք անցնում:
9. Մարդը տասը կիլոմետր քանի՞ ժամում կանցնի վոտքով, ձիով:

1. Ձին վազում է, իսկ հծը:
2. Վորդը սողում է, իսկ ծիծեռնակը:

3. Մողեսը սողում է, իսկ ձուկը:
4. Ուրուրը թռչում է, իսկ մորեխը:
5. Կատուն մլավում է, իսկ ձիւն, կոճը, խոզը, վոչխարը, շունը:
6. Խոզի ձագը գոճի յե կոչվում, իսկ ձիւնը, կովիւնը, կատվիւնը, շանը:



15. Բժշկի գրույցներից

I գրույց

Բժիշկը մեզ քննեց. շատերի մարմինը կեղտոտ էր: Բժիշկը մի կտոր ապակի յեր բերել — խոշորացույց. այդ խոշորացույցը դրեց մեր ձեռքերի վրա ու հարցրեց.

— Ի՞նչ եք տեսնում:

— Շատ ծակոտիներ. — պատասխանեցինք մենք:

— Այդ ծակոտիներից քրտինք է դուրս գալիս, — ասաց բժիշկը. — քրտինքի հետ մեր մարմնից փասակար, կեղտոտ նյութեր են դուրս գալիս: Յեթե այդ ծակոտիները կեղտոտ լինեն, փասակար նյութերը կմնան մարմնի մեջ ու կթունավորեն:

Բժշկի այս զրույցից հետո մենք իմացանք, թե ինչո՞ւ պետք է մարմինը մաքուր պահենք:

II գրույց

— Յերեխեք, յես տեսնում եմ, վոր դուք չեք սիրում ուտելուց առաջ ձեռքներդ լվալ, — ասաց

բժիշկը.—պետք է լվացվել. ձեռքերով մենք հաց ենք վերցնում, դնում բերանը. յեթե ձեռքերը կեղտոտ են, փասակար միկրոբները մեր բերանն են մտնում ու ամեն տեսակի հիվանդություններ առաջացնում:

— Դուք հետևում եք ձեր դասարանի աշակերտների մաքրությանը:

— Ուտելուց առաջ լվացվում եք:

16. Մեր ճաշը

Հասավ ճաշի ժամանակը:

Մայրիկս կավե ահագին ամանը լցրեց թանապուրով ու մեջտեղ դրեց: Բոլորս շարվեցինք ամանի շուրջը, գդալները վերցրինք ու սկսեցինք ուտել:

Արտաշը գդալը ձեռքին՝ մտիկ եր տալիս ուտողներին, ամանն ու գդալները զննելով: Նա տեսնում եր, թե ինչպես պապիկի ու հայրիկի բեղերը թրջվում եյին ապուրով. ապուրը կաթկթում եր ամանի մեջ: Գդալներն ել լավ չեյին մաքրել. յերեկվա ապուրը չորացել եր վրաները: Արտաշի ախորժակը փակվում եր, չեր ուզում ճաշել. նրա վրա միշտ նեղանում եյին. անունն ել «կոտրատվող» եյին դրել:

— Լավ եր անում Արտաշը, վոր ընդհանուր ամանից չեր ուտում:

— Առողջապահական ե ընդհանուր ամանը:

— Առանձին ամաններում ուտելն ինչո՞վ ե լավ:

— Ձեր տանն ինչպես են ճաշում:

— Ձեր ամաններն ու գդալները մաքրուք են լինում:

— Ինչո՞ւ պետք է մաքուր լինեն:

— Կեղտից ամեն տեսակի հիվանդություններ են առաջ գալիս մաքրություն պահպանեցեք:

17. Ի՞նչ ե անում մեր սանիտարը

Ամեն շաբաթ մեր դասկույր նշանակում է մի նոր սանիտար, վոր հսկում է մաքրությանը:

Հետևում ե, վոր դասամիջոցներին լուսամուտը կամ ողանցքները բաց անեն, դասարանի փոշին և գրատախտակը թաց ջնջոցով մաքրեն. նա մեզ հիշեցնում է, վոր դասարան մտնելիս վոտքներս մաքրենք և դպրոցում մաքրություն պահպանենք:

Յերբ մեկը ձեռքն ե կտրում կամ մի տեղը փասում, սանիտարը ոգնություն ե ցույց տալիս, կապում կամ յող ե քսում:

Մեր սանյեռյակը պատերին պլակատներ ե կախարել. նրանց վրա առողջապահական կանոններ են գրված, նախասենյակում պլակատի վրա գրված ե՝

Վոսնեդ մաքրի:

— Սանիտար ունե՞ք դուք:

— Ի՞նչ ե անում նա:

— Դպրոցում մաքրություն պահպանում եք դուք:



18. Մրսեղու դեմ

Հենց վոր աշնան անձրևներն սկսվում եյին, մեր դասարանում հազ ու փռշտոց եր ընկնում. հարբուխն սկսվում եր:

Կարմրաթուշ Արմիկն եր միայն, վոր ծիծաղում
եր մեզ վրա. հարբուխը կամ հազելը չգիտեր ինչ
բան ե: Շատ խնդրեցինք,
պատճառը մեզ ասաց.



«Յես պիտներ եմ, մեր
հրահանգիչը մեզ մի քա-
նի պատվեր ե տվել. յես
կատարում եմ և չեմ հի-
վանդանում: Ահա այդ
պատվերները:

1. Վոտներդ չթրջես,
իսկ յեթե թրջվեց, շուտ
չորացրու:

2. Քրտնած դուրս չգաս փողոց: Զգուշացիր մի-
ջանցուկ քամուց:


3. Ամենագլխավորը՝ առավոտ ու յերեկո մինչև
գոտին մարմինդ սառ ջրով լվա: Առավոտը, յերբ լվաց-
վում ու շփվում ես սառ ջրով, աշխուժ ու զվարթ
ես դառնում:

— Հետևեցեք այս պատվերներին:



19. Ուրախ ձմեռը

Մենք ուրախացանք, վոր ձյուն ե յեկել: Սահ-
նակներ շինեցինք, վազեցինք՝ սարից գետափ սղղա-
լու: Սարից մինչև գետը մեկ եյինք սղղում:



Սահնակը դեռ չեյինք կարողանում քշել:

Պտտվում եյինք ու ամեն թմբից հետո գլխի-
կոնձի տալիս: Թրմփում եյինք իրար գլխի, վեր թըռ-
չում, ուրախ-ուրախ ծիծաղում:

— Ձմեռը դուք ի՞նչ եք խաղում:



20. Իմ սղոյանը

(Կարգալու յե ուսուցիչը)

Մեզ մոտ մալականներ են ապրում: Ձմեռը նրանց յերեխաները տաք հագնվում են ու սարից սահնակներով սղոյում:

Յես ել սահնակ ունեյի, բայց իմը շատ կոպիտ եր ու ծանր, հազիվ-հազ սղոյում եր:

Նստում եյի վրեն ու վոտներս գետնին խփելով մի կերպ ներքև գնում: Իսկ են մալականների տղերքը գալիս եյին ու կայծակի նման կողքովս անցնում:

Կոլյա անունով մալականի մի տղա կար. նրա սահնակը բոլորից լավն էր:

— Կոլյա, — ասացի եղ տղին, — մի ցոլյց տուր քո սահնակը, տեսնեմ եղ ի՞նչպես ե շինած, վոր եղպես թեթև ե ու լավ սղոյում ե:

Ցոլյց տվեց, տեսա. բարակ, պինդ տախտակից եր շինած, տակիցն ել յերկաթ եր խփած:

— Ես յերկաթը վորտեղից ե, — հարցրի լես:

— Արկղի կողքերի թիթեղից ե, կոոպերատիվում շատ կա:

Տուն յեկա, յեղբորս հետ սկսեցինք շինել. մուլթն եր, վոր պրծանք:

Ել չհամբերեցի, դուրս յեկա սարը, նստեցի. մի գնաց, մի գնաց վոր. ի՞նչ Կոլյա, ի՞նչ Իվան, հազարը գային՝ յետևիցս չեյին հասնի:


— Դուք սահնակ ունեք:

— Սահնակ չինեցեք:

— Սահելու համար սար պատրաստեցեք:

21. Առափոտ

Արեգակը դուրս ե յեկել պսպղալով,
Շողքը յերդից ներս ե ընկել շողշողալով,
Ծիտը ծառին կըշկշում ե ծվլալով,



Ձորում առուն քըշքշում ե վըշվշալով,
Ծուլլ տղայի քունն ե տարել խըռմռալով,
Կոշիկները շունն ե տարել մըռմռալով:

22. Դասից ուշացող աշակերտը

— Ա՛րմիկ, վեր կաց, ուշ ե արդեն, — արթնացնում եր տղային մայրը:

Արմիկը վեր կացավ, լուսամուտից դուրս նայեց, տեսավ՝ ընկերները դպրոց են շտապում:

— Շո՛ւտ, մայրիկ, հանց տուր, ուշացել եմ:

— Բա չե՞ս ամաչում. մի լվացվի՛ր, յերեսդ մաքրի՛ր, մրի մեջ կորել ե. մազերդ չես սանրել:

— Փամանակ չունեմ, դպրոցից կուշանամ:

Արմիկը դպրոց վազեց. դասն սկսվել եր. աշակերտները նայեցին Արմիկին, ծիծաղները բռնեց:



— Տեսեք, տեսեք մի, Արմիկը վսնց ե յերեսը մրոտել:

— Յերեսը նախշել ե, նախշել:

— Բա ձեռքերը:



— Դասերից հետո,—ասաց ուսուցիչը,—ժողով կանենք ու կվորոշենք, թե ինչպես կովենք անմաք-րության և ուշանալու դեմ: Իսկ դու, սիրելիս, գնա նախասենյակ, յերեսդ ու ձեռքերդ լվա, սանրը-վիր, հետո դասի յեկ,—ասաց նա Արմիկին:

Քիչ մնաց, վոր Արմիկը լաց լիներ: Բայց ի՞նչ արած, ինքն եր մեղավորը, պիտի լուեր...

— Ձեր դասարանում ել դասից ուշանում են:

— Ի՞նչպես եք կովում դրա դեմ:


— Ի՞նչպես եք հետևում ձեր ընկերների մաքրությանը:

— Դպրոցում լվացարան ունե՞ք, վոր խաղից հետո ձեր կեղ-տոտած ձեռքերը լվանաք:

23. Գրտատար սկանչները

Այսոր մեծ դասամիջոցին մենք ձնե մարդ եյինք շինում: Շատ եյինք ուրախանում: Ենքան մեծ եր, վոր ձեռքով գլխին չեյինք հասնում:
Մեկ՝ ել Պողոսն ինձ ձայն տվեց.

— Ա՛րտուշ, Ա՛րտուշ, ահանջներդ բոլորովին սպի-



տակել են, ցրտատար են յեղել: Շուտ ձյունով շփիր:

Յես չլսեցի նրան. կարծում եյի ցուրտ կղզամ: Պողոսն ու Աշոտը վազեցին ինձ մոտ և առանց բան ասելու սկսեցին ձյունով ահանջներս շփել:

Յերկու բոպեյից հետո բաց թողին, ասացին.

— Լավ, անցավ: Ճարպ քսելու կարիք ել չկա:

Մինչև իրիկուն ահանջներս մրմռում եյին:

— Ձեր ահանջները ցուրտը տարե՞լ ե:

— Ի՞նչ եք արել այդ դեպքում:

— Ցուրտը տարած ահանջները կամ ձեռքերը կարելի՞ յե կրակին մոտեցնել:

— Ինչո՞ւ չի կարելի. հարցրեք բժշկին:

24. Ի՞նչ կխնդրեր գիրքը

Ուսուցչուհին այսոր ասաց մեզ.

— Գիտե՞ք, յերեխաներ, ձեր գիրքն ի՞նչ կասեր ձեզ, թե խոսել կարողանար: Նա կասեր.

— Կեղտոտ ձեռքերով ինձ չվերցնե՞ք:

— Մեջտեղից չծալե՞ք, կազմս կփշանա:

— Թերթերի անկյունները չծալձլե՞ք:

— Վոչինչ չգրե՞ք և չնկարե՞ք իմ մեջ:

Ուսուցչուհու ասածը մեզ շատ դուր յեկավ, և մենք վորոշեցինք գրքի բոլոր խնդիրները կատարել:

— Ի՞նչ կխնդրեր տետրակը:

— Ի՞նչ կխնդրեր նստարանը, սեղանը:

— Ի՞նչ կխնդրեր դասասենյակը, մատիտը, գրչակոթը, և այլն:

25. Քուրքը

Մի գյուղում յերկու վորը մանուկ կային, մեկը՝ իննը, մյուսը՝ տասը տարեկան: Յերկուսն ել ուղում եյին կարգալ-գրել սովորել. բայց միայն մի բուրբ ունեյին. ձմեռն ել շատ ցուրտ եր. ի՞նչ անեյին, յեր-

կուսը միասին դրպ-րոց գնալ չեյին կա-րող:

— Գիտե՞ս ինչ, Մուկուհ, — ասաց մեծը:

— Ի՞նչ, — հար-ցրեց Մուկուհը:

— Արի եսպես

անենք. մի որ քուրքը յես հագնեմ, դպրոց գնամ,



մյուս ուրը՝ դու: Ինչ վոր յես սովորեմ, քեզ կպատմեմ, ինչ վոր դու սովորես, ինձ պատմի:

Այդպես ել արին:

Մի անգամ ուսուցիչը հարցրեց Պարույրին.

— Յեղբայրդ ո՞ւր ե, ինչո՞ւ դասի չի յեկել:

— Քուրք հագնելու հերթը իմն ե, — պատասխա-նեց Պարույրը:

26. Որատետրից

Այսոր ձյուն յեկավ:

Շատ, շատ, փափհուկ, մաքուր:

Յերկրորդ դասից հետո մենք գնացինք բակը:

Չնագնդի խաղացինք:

Արաքսին, Մարոն ու Արամը ձնե մարդ շինեցին. մենք սկսեցինք ոգնել նրանց. մեծ ձնակույտը գլո-րելով մոտեցնում եյինք ձնե մարդուն:

— Տեսե՞ք, տեսե՞ք, — ձայն տվեց Ազատը, — ձյունի տակ կանաչ խոտ կա:

— Ինչո՞ւ չի սառել. — հարցրինք մեր ուսուցչին:

— Վորովհետեւ ձյունով ծածկված ե յեղել:

— Դե, շուտ-շուտ ծածկենք. թե չե կմրսի, կսառչի, — ասաց Ազատը:

Խոտը ծածկեցինք ու ելի մեր խաղը շարունա-կեցինք: Ձյունի վրա Ազատն ագռավի ճանկերի հետքեր գտավ. այդ հետքերով մենք իմացանք, թե ագռավը վոր կողմն ե գնացել:

— Չմեռը ձյունն ինչ նշանակութուն ունի բույսերի համար:



27. Վերսակը


Ձյունի բյուրեղներն ընկնում են գետին: Ծածկում են գետինը սպիտակ, փափուկ վերմակով: Ի՞նչ տաք է սերմերի համար հողում, ձյունե ծածկոցի տակ, այնտեղ չեն մրսի:

Կգա գարունը, ձյունի բյուրեղները կհալչեն, ջուր կդառնան:

Մերմերը ջուր կխմեն, ծիլեր կարձակեն: Խոտեր, ծառեր ու ծաղիկներ դուրս կգան:

28. Չմռան երսկուրսիան

— Յերեխեք, յեկեք եքսկուրսիա գնանք, — ասաց ուսուցիչը:



— Ամեն ինչ ձյունը ծածկել է, ի՞նչ պիտի տեսնենք, — հարցրեց մեկը:

— Մենք ել կերթանք հենց այդ ձյունը տեսնելու, — պատասխանեց ուսուցիչը: — Յերբ տուն դառնանք, ամեն մեկդ թող պատմի, գրի ու նկարի այն, ինչ տեսել է եքսկուրսիայի ժամանակ:

Բոլորս համաձայնեցինք, և ուսուցիչն ասաց, թե ինչ պիտի անենք և դիտենք եքսկուրսիայի ժամանակ.

1. Վհր ձյունն է ավելի սպիտակ. ե՞ն, վոր նոր է յեկել, թե ե՞ն, վոր վաղուց է յեկել:

2. Ի՞նչ գույն է ստանում ձյունը հալչելու ժամանակ:

3. Չափեցեք ձյունի խորությունը պարտեզի դանազան մասերում ու իմացեք ձյունը գետնի վրա հավասար է նստած:

Մենք յերեք խմբակների բաժանվեցինք ու գնացինք: Ձյուն չափողները վերջացրին աշխատանքը և սկսեցին ճնազնդի խաղալ:

Դպրոց վերադառնալով մենք ձյունի բյուրեղներ նկարեցինք ու գրի առանք այն բոլորը, ինչ տեսել էինք եքսկուրսիայի ժամանակ:



29. Ձյունը

Մենք վերցրինք ձյունով լիք բաժակը և դասարան բերինք: Ձյունը սկսեց դանդաղ հալչել. յերբ բոլորովին հալվել էր, մենք տեսանք, վոր բաժակը լիքը չեր, և ձյունից գոյացած ջուրը պղտոր էր:

Ջուրը բաժակով միքանի որ մնաց դասարանում,
և մենք տեսնում եյինք՝ ինչպես նա ամեն որ պա-
կասում եր: Ուսուցիչը մեզ ասաց, վոր Ջուրը գոլոր-
շիանում ե և ցնդում ողի մեջ:

30. Թռչունների սեղանը

I

Յուրա ձմեռ եր: Ջյունը ծածկել եր գետինը:

Թռչունները քաղցած, անհանգիստ թռչկոտում
եյին: Մանկատան յերեխաները սենյակի պատու-
հանից նայում եյին գուրս:

Սուրիկն ասաց.

— Յեկեք քիչ հաց տանք՝ ուտեն:

— Չէ, յեկեք այնպես անենք, վոր նրանք ձմեռը
բոլորովին սոված չմնան,—ասաց Շողիկը:

— Ի՞նչպես,—հարցրին յերեխաները:

— Ա՛յ, յեկեք նրանց համար սեղան պատրաստենք:
Բոլորը համաձայնեցին:

II

Վերցրին մի լայն տախտակ, ծայրերին պարան
ամրացրին և բակի ծառից կախեցին:

Այդ տախտակի վրա հացի փշրանքներ շաղ տվին:
Ճնճղուկները վրա թափվեցին, կերան:

Դրանից հետո յերեխաներն ամեն առավոտ թռ-
չունների համար սեղան եյին պատրաստում, իսկ
թռչուններն ուրախ ծլվլալով գալիս ուտում եյին:

Այսպիսով նրանցից շատերը մահից ազատվեցին:

— Դուք ել թռչունների համար սեղան պատրաստեցեք:

— Կերակրեցեք նրանց. թռչունները մեր բարեկամներն են:



31. Մենակ կապրեմ

(Կարդալու չե ուսուցիչը)

— Պետք ե փախչեմ ձեզնից, մենակ ապրեմ,
մեն-մենակ,—բղավում եր, գոռում ութ տարեկան
կովարար Պետիկը:

— Միշտ կռիվ ես անում. մի ասա տեսնեմ՝ մարդ-
կանցից հեռու վո՞նց ես ապրելու,—ծիծաղելով ասում
եր հայրը:

— Անտառում պտուղներ կուտեմ... քիչ փող ու-
նեմ... հաց կառնեմ... ասում եր Պետիկը:

— Ուրեմն մարդկանցից կառնես. հացը մարդիկ
են թխում. իսկ վոր ցուրտը սեղմի, ո՞ւր կգնաս, գայլի
բո՞ւնը կմտնես:

— Յես... յես... կգնամ կգնամ ելի,—կմկմաց
Պետիկը:

— Չէ, առանց մարդկանց, սիրելիս, այս աշխար-
հում ապրել չես կարող: Դե լաց մի՛ լինի, արի խո-
սենք:

— Տեսնենք՝ ո՞վ քեզ համար ի՞նչ ե արել. ա՛յ, ես
քո նոր կոշիկները վճարեղից եմ:

— Կոշկակարն ե կարել,—շնչաց Պետիկը:

— Լավ. իսկ քո փայտե ձի՞ն:

— Վարպետ Սիրաքն ե շինել:

— Այ, յերկու մարդ արդեն քեզ համար աշխատել
են: Հիմա շուրջդ նայի՛ր. յես իրերի անուանները տամ,

Իսկ դու ասա, թե վոր արհեստավորն ինչ է շինել,
կամ վոր իրը գործարանից է դուրս յեկել:

Պետիկը լացը մոռացավ: Հոր ասածը դուր յեկավ
նրան:

Յերկու մեծ յեղբայրներն էլ մոտեցան ու սկսե-
ցին խոսել, թե վոր իրը ով է պատրաստել:

— Դուք ել փորձեցեք իմանալ՝ ձեզ շրջապատող իրերն ովքեր
են պատրաստել:

— Ինչո՞վ են պատրաստել:

— Ինչի՞ց են պատրաստել:

— Եթե դուք իմ կատարեցեք մոտակա հյուանոցը, դարձնոցը և
ուրիշ արհեստանոցներ:




32. Իմն է

Վարդանի ու Սուրիկի ծնողները մահացան. յերե-
խաները տեղ հունեյին ապրելու. նրանց մանկատուն
տարան: Մանկատան ակումբում մի մեծ փայտե ձի
կար: Սուրիկն ու Վարդանը վրա ընկան ձիուն.

— Ի՞մն է, ի՞մն է ձին, — ասում էր Սուրիկը:

— Չէ, ի՞մն է, — խլում էր Վարդանը:

Իսկ մյուս յերեխաները կանգնել ու ծիծաղում
էյին սրանց վրա:



— Ե՛յ, խելացիներ, ձին վոչ մեկինդ է, վոչ էլ
մյուսինը. ձին բոլորինս է: Մենք իմն ու քոնը հու-
նենք. մեզ մոտ ամեն ինչ բոլորինս է:

— Եթե դուք իմ կատարեցեք մոտակա մանկատունը, ծանոթա-
ցեք սաների կյանքին:



33. Հայրը յեւ վորդիները

Հայրը խրատում եր վորդիներին, վոր նրանք սիրով ապրեն. բայց վորդիները չեյին լսում: Հայրը մի խուրձ ճիպոտներ կապեց, ասաց վորդիներին.

— Ո՞վ կկտորի այս խուրձը:



Վորդիները մեկ-մեկ փորձեցին, չկարողացան: Հայրն արձակեց ճիպոտները և ասաց.

— Մեկ-մեկ կտորեցէք:

Տղաները մեկ-մեկ կտորեցին բոլոր ճիպոտները: Այն ժամանակ հայրն ասաց.

— Դուք ել նման եք այս ճիպոտներին. յեթե միասին ու սիրով ապրեք, ձեզ վոչվոք չի հաղթի. իսկ յեթե կռվեք ու բաժան-բաժան սպրեք, ամեն մարդ ձեզ կարող ե հաղթել:

— Դուք ինչպես եք կարծում, մարդիկ պետք ե միանան, թե վոչ: Ինչո՞ւ:

— Ի՞նչ միություններ գիտեք դուք:



34. Յեղեպնի

Ձմեռ ե: Բոլոր
ծառերը տկուր՝
տխուր անտառում
դողում են, մրսում:
Յեղեպն միայն,
կանաչով դուգված,
ամուր կանգնել ե
ցուրտ քամու դիմաց:

— Ել վոր ծառերն են ձմեռը կանաչ լինում:




35. Ամեն մեկն աշխատում ե բոլորի համար

1. Դարբինն աշխատում ե դարբնոցում, գերան-



դիներ, մանգաղներ, խոփեր ե պատրաստում գյուղացիների համար:

2. Գործարաններում աշխատում են բանվորները: Նրանք պատրաստում են կտորեղեն, կաշի և տեսակ-տեսակ մեքենաներ:




3. Հողագործ գյուղացին աշխատում է դաշտում: Աշնանը վոսկեհատ ցորենը ջրաղաց է տանում, ալյուր անում, քաղաք է բերում: Քաղաքի բանվորներն առանց գյուղացու հացի ապրել չեն կարող:




4. Գյուղացին ծախում է ցորենը, շաքարից պնում է կտորեղեն, վոտնաման, գործիքներ: Նա յեւ առանց քաղաքի բանվորների ապրել չի կարող:

Գյուղացին պետք է բանվորին, բանվորը՝ գյուղացուն:

5. Այս գրքի վրա աշխատել են գրաշարներն ու տպագրողները:



6. Ուսուցիչն աշխատում է դպրոցում, վոր յերեխաները գրագետ դառնան: Յերեխաները սովորում են, վոր մեծանան, աշխատավորներ դառնան:



Բոլորն աշխատում են:

Ամեն մեկն աշխատում է բոլորի համար:

- Նկարեցեք դարբնի աշխատանքը:
- Նկարեցեք գյուղացու աշխատանքը:



36. Ի՞նչ կարող ես անել կողեկտիվը

Ձմեռ եր. շուտով ձյուն պիտի գար: Լեիկի մայրը հիվանդ եր: Արմիկը տեսնում եր, վոր Լեիկը հաճախ դասի չեր գալիս, դասերը չեր պատրաստում, փայտի յեր գնում: Հավաքեց ընկերներին ու ասաց.

— Լեիկը հայր չունի, մայրն ել հիվանդ պառկած ե: Մենակ յերբ պիտի կարողանա ամբողջ



ձմեռվա փայտը բերել: Յեկեք կողեկտիվով ոգնենք:

— Գնանք, գնանք,— ձայն տվին պիոներները:


Հենց նույն օրը ճաշից հետո նրանք խմբով անտառ գնացին, հավաքեցին չորացած ճյուղերը, կապեցին ու շալակներն առած՝ Լեիկենց տունն յեկան: Այսպիսով կողեկտիվը յերեք օրում ահագին փայտ հավաքեց:

Սրանից հետո Լեիկը վոչ բացակայում եր և վոչ ել անպատրաստ դասի գալիս:

— Ի՞նչ կողեկտիվ աշխատանք եք արել դուք:

— Ձեր ընկերներից վորին կարող եք ոգնել ՀԷՐ աշխատանքով. ոգնեցեք նրան:

— Ձեր գյուղացիք ի՞նչ կողեկտիվ աշխատանքներ են արել. առու փորել, ճանապարհը նորոգել:



37. Քաջ տղան

Մանուկների խումբն ուրախ-ուրախ դպրոց եր գնում:

— Հապա հիվ ինձ կըռնի,— ձայն տվեց Աշոտն ու սկսեց արագ վազել:

— Յես, յես... ձայն տվին մյուսներն ու վազեցին Աշոտի յետևից:

Հանկարծ դարպասից դուրս վազեց մի շուն ու նետվեց դեպի վազող յերեխեքը:

Բոլորը պուկ յեկան ու փախան. միայն փոքրիկ Հայկը կանգ առավ, մատը թափ տվեց ու քնքուշ կերպով ասաց.

«Կհւտիկ, Կհւտիկ, տես, չկծես ինձ հա, չկծես»:

Շունը կանգ առավ ու դադարեց հաջելուց: Հետո պոչը ճոճեց, մոտեցավ Հայկին ու քամբավեց նրան: Հայկը շոյում եր շանը: Պայուսակից հանեց մի կտոր հաց, գցեց շանը և վազ տվեց վախկոտ ընկերների յետևից, վոր փողոցի մյուս ծայրին կանգնած՝ մտիկ եյին տալիս:

— Նկարեցեք այս տեսարանը:


38. Գայլերի փտանգը

Մեր գյուղի մոտ գայլեր եյին յերևացել: Ենքան ել շատ եյին:

Ամեն ուր փորձանք եր պատահում: Մի ուր հորթ եյին տանում, մի ուր փոչխար:

Պառափները մի լաց եյին դրել, մի լաց:

— Բա ամոթ չի, թվանքներդ առել եք ու նստել: Գելերը մեր տունը քանդեցին:



Վհնց եյինք ամաչում:

Մի ուր հավաքվեցինք, փորսի գնացինք: Մենք տա-
սը հոգի եյինք, քսան հոգի յել ուրիշ գյուղերից յե-
կան:

Եդ որը Հակոբի եշը սատկել եր. քաշ տվինք,
տարանք, գեղի ղրաղը մի այգու մեջ դրինք, թագ
կացանք:

Նոր եր սկսել մթներ: Սասաիկ ցուրտ եր: Մին ել
հանկարծ գելի փոռնոց լսվեց, հետո մի ուրիշինը ու
մեկ-մեկու յետևից գելերը յեկան, եշի դիակին վրա
պրծան:

— Տղերք, ժամանակն ե,— հրացաններդ պատրաս-
տեցեք,— ձայն տվի յես:

Գազանների աչքերը մթան մեջ փայլ եյին տա-
լիս:

Հրացանները մեկ-մեկու յետևից լցնում եյինք
ու կրակում:

Առավոտը 14 գելի լեշ հավաքեցինք, սելը դար-
սեցինք ու յեկանք գյուղը:

Պառափներն ել յերեսով չեյին տալիս:



39. Հագուստը

Մարդը ձմեռվա ցրտից պաշտպանվելու համար
բրդից թելեր մանեց և շոր գործեց, ամառվա զգես-



տի համար մարդն ոգտվեց վուշի և կանեփի թելե-
րից:

Աշխատանքը ձեռքերով դանդաղ եր կատարվում:
Մարդն սկսեց մտածել, հնարեց կտորներ գործելու
մեքենա, վորը այժմ մեզ համար ամեն տեսակի
կտորեղեն ե պատրաստում:

- Հագիդ շապիկն ինչիցն ե:
- Ձեր գլուղում կտորներ գործում են:
- Ինչից են գործում:
- Ձեր գլուղում բամբակ կամ կանեփ ցանում են:
- Պատմեցեք, թե ձեր գլուղում ինչպես են հագնվում:



40. Ճախարակ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
լիսեռնիկդ պտտիր.
մանիր թելեր հաստ ու բարակ,
իլիկիդ վրա փաթաթիր.
Ձեթ եմ ածել ականջներդ,
նոր շինել եմ շրտվիկ,
դեհ, շուտ շարժիր լայն թևերդ,
վոստեր շինիր սուրուլիկ,

- Ձեր գլուղում ճախարակ գործ են ածում:
- Ուրիշ ինչով են թել մանում:
- Ինչ են գործում թելից:
- Ել ինչով կարելի ցե կտոր գործել:
- Եթե սկուրսիա կատարեցեք դեպի մոտակա ջուհականոցը,
կտորի գործարանը, ծանոթացեք նրանց աշխատանքին:

41. Կոոպերատիվը

Մեր դպրոցի կոոպերատիվի ամբողջ ապրանք-
ները տեղավորված են մի փոքրիկ արկղում:

Առավոտը այդ արկղը դնում ենք նախասենյակը
ու աշակերտներին գրենական պիտույքներ ծախում:

Դասերից հետո արկղը դնում ենք ուսուցչի սե-
նյակը:

Ապրանքները մեզ գյուղի կոոպերատիվն ե տա-
լիս եժան գներով. մենք ել քիչ ոգուտով ծախում ենք
աշակերտներին: Ստացած ոգուտով անդամագրում
ենք մեր չքավոր ընկերներին, նրանց տետրակ և ուրիշ
պիտույքներ տալիս:

Մենք եքսկուրսիա գնացինք հարևան գյուղը՝
յոթնամյակի կոոպերատիվը տեսնելու:

Այ, այնտեղ գործը շատ կանոնավոր եր. կոոպե-
րատիվին մի ամբողջ սենյակ են տվել: Պահարաններ
կան. կանոնավոր հաշիվ են պահում:


Վերադառնալիս ճանապարհին խոսում եյինք, թե
ինչպես անենք, վոր մեր կոպերատիվն ել մեծա-
ցնենք ու կարգի բերենք:

- Կոոպերատիվ ունեք դպրոցում:
- Կապ հաստատեցեք մյուս դպրոցների կոոպերատիվների
հետ:



42. Գյուղի առուտուրը

Կեղտոտ, աղքատ գյուղ եր մեր գյուղը: Այդ գյուղում միայն մի լավ քարաշեն, յերկու հարկանի տուն կար, դուքանչի Հաթամի տունն եր այդ: Վերե-



վի հարկում ինքն եր ապրում, իսկ ներքևում իր խանութն եր:

Ես խանութում ել հոտած ապրանք, ել փտած չիթ չկար, վոր չծախեյին գյուղացիները վրա:

Հեղափոխությունը յեկավ:

Մեր գյուղի կյանքը փոխվեց:

Գյուղացիք փայտ ստացան. շենքերը նորոգեցին, իրանք կարգի ընկան, դուքանչի Հաթամի տան կողքին կոոպերատիվ շինեցին, ապրանքով լցրին:

Գործը լավ գնաց. գյուղացիք Հաթամի խանութը ել վոտ չգրին:

— Ես կոոպերատիվը շինեցինք, հիմա յեւ դրա-

րոցի շենքը կսկսենք, հետո յեւ ելեկտրոկայանը,—ասում եյին գյուղացիք:

Խանութպան Հաթամի գործերը թարսվեցին, տունն առանց վերանորոգման քոսոտվեց. իրա ձայնը փորն ընկավ. իսկ նրա չաղ կինը՝ Յեղիսաբեթը լղարեց, չոփ դարձավ: Եւ ես առուտուրը չկար, եւ համով կերակուրները չկային:

— Ձեր գյուղում կոոպերատիվ կա:

1. Համեմատեցեք կոոպերատիվն ու մասնավոր խանութը:

2. Երսկուրսիա գնացեք դեպի կոոպերատիվ:

3. Ի՞նչ ապրանքներ են ծախում կոոպերատիվում:

4. Գրեցեք ապրանքների անունները:



43. Գյուղից քաղաք

(Կարդալու յե ուսուցիչը)

— Եգուց գնում եմ քաղաք,—ասաց գյուղացի Գասպարը Լեոնին,—կարտոֆիլ, քյալամ եմ տանում: Մազին ու Սաքոն անիվ ու սոնի յեն պատրաստել, նրանք եւ ես գալիս. ուզում ես, արի միասին գնանք:

— Հա, յես եւ ածուխ եմ տանելու, փողի պետք ունեմ: Քանի ճանապարհը բաց ե, գնանք, թե չե հետո ուշ կլինի:

— Հայրիկ ջան, մեզ համար քաղաքից նոր գրքեր և Լեոնի պատկերը կբերես:

— Գասպար, թե՛ր չմոռանաս. հայրիկ, սանդը՛րը լա՛փն առ,—պատվիրում ե՛յին ամեն կողմից՝

Յերկար ճանապարհ անցան, հասան Յերևան. քե-
րածը ծախեցին, կոոպերատիվից առան կոշիկ, գըլ-
խարկ, չիթ ու շալ, վեդրո, լամպ—ամեն ինչ։ Պետ-
հրատի խանութից իրենց ուզած գրքերը, նկարներն
առան։ Գասպարը տեսավ որացույցը, չհամբերեց՝

— Ես ել առնեմ. տանը չորս սովորող կա. թանգ
ե, բայց ինչ արած, առնեմ, յերեխեքը շատ կուրա-
խանան։

- Ձեր գյուղից ինչ են տանում քաղաք ծախելու։
- Քաղաքից ինչ են բերում ձեր գյուղը։
- Քաղաքն առանց գյուղի և գյուղն առանց քաղաքի կարո՞ղ
են ապրել։
- Ինչո՞ւ չեն կարող։




44. Շարժվող տունը

Յերբ պապս առաջին անգամ վերադարձավ կա-
յարանից, զարմացած պատմում եր գնացքի մասին։

— Ամենից առաջ՝ նա իր գնալու ժամանակն
ունի. քեզ յերկու անգամ զանգով կանչում ե. ու-
շացար—ուրեմն կմնաս։

Ուզածդ ժամանակ չես կարող ցած իջնել. դու
պետք ե իրեն հարմարվես. կանգնեց՝ կիջնես. չե՛
հետը կգնաս։

Վոչ ձի յե քաշողը, վոչ յեզ. վոչ ուտել կուզի,
վոչ հանգստանալ. հարկավոր ե միայն վառել և ա-
ռատ ջուր տալ։



Սա մի շարժվող տուն ե. վազում են իրար յե-
տևից սենյակները, մեկը մյուսին քաշում, միասին
շարժվում, միասին կանգ առնում. վա՛յ թե մեկը
հերթից դուրս յեկավ.—կմնա։

Ես քաղաքում աչքդ խփում ես, բաց ես անում,—
մի ուրիշ քաղաքումն ես։


Առաջ յեթե յերեք ուրում եյիր գնում, հիմա կես
որն ել բավական ե։ Միայն չհասկացա, թե ինչո՞ւ
մեկ-մեկ ձենը գլուխն ե գցում ու գոռում, սուլում,
սար ու ձոր թնդացնում։

- Գնացք տեսել եք դուք։
- Պատմեցե՛ք ձեր տպավորությունները։

— Ինչո՞վ ավելի արագ կարելի չե՞ զնալ—զնացքո՞վ, ձիո՞վ թե՞ վոտքո՞վ:

— Գնացք նկարեցե՞ք:

— Նքսկուրսիա զնացե՞ք մոտիկ կայարանը:




45. Ելեկտրականություն

Մեր տանն ել ելեկտրական թելեր անցկացրին, տանձի նման մի շուշա կախ տվին:

— Այ, կտեսնե՞ք, թե ի՞նչ լույս կլինի,—ասաց թելերն անցկացնող յերիտասարդը:

— Բանի՞դ կաց, խելքի տոպրակ,—ասաց մեր պապին.—ո՞վ ա տեսել, վոր շուշե տանձը լույս տա. Գնա՛, բո պապին եդ բանը հավատացրո՛ւ:



Յես ել չեյի հավատում: Վո՞նց թե՛ վո՞չ նավթ ե պետք, վո՞չ ել լուցկի:

Մթնեց: Հայրիկս պատին մոտեցավ. մի բան վոլորեց, մեկ ել ի՞նչ տեսնենք՝ տունը լուսավորվեց,

են ել վո՞նց. ո՞վ եր տեսել ենպես պայծառ լույս:

— Տեսա՞ք. ա՛յ, թե ի՞նչ են հնարել գիտնականները: Համ լավ լույս ե տալիս, համ ել մուր չունի:

— Ձեր գյուղում ելեկտրականություն կա՞:

— Իմացե՞ք ուսուցչից՝ ելեկտրականությունն ի՞նչ ոգուտ ե տալիս:

46. Կարմիր քանակի տարեդարձը

Հսկեց յերաժշտության ձայնը:

— Գալիս են, գալիս:



— Կարմիր-բանակայիններն են գալիս: Այսօր Կարմիր բանակի տարեդարձն ե:

Բոլորը դեպի լուսամուտներն են վազում. փողոց են դուրս գալիս:

Ահա կարմիր հրամանատարը մոխրագույն ձի նստած. նրա յետևից գնում են յերաժիշտները:

Ինչքան մեծ թմբուկներ, ինչ պսպղան փողեր: Ահա և դրոշակը: Դրոշակի յետևից գնում են զինվորները: Ամեն մի շարքում ութ զինվոր և գնում: Հավասար քայլերով են անցնում:

Յերաժիշտությունը լռեց:

Առաջնորդը նշան տվեց. նրանք սկսեցին յերգել իրենց սիրած յերգը.

„Անվախ կռիվ կերթանք
բուրժուալի դեմ“...

— Կարմիր բանակ տեսել եք դուք:

— Ձեր գլուղում Կարմիր բանակից վերադարձած գլուղացիներ կան:

— Իմացեք նրանցից Կարմիր բանակի մասին:

— Յեթե ձեր գլուղում կամ քաղաքում կարմիր-բանակայիններ կան, եքսկուրսիա գնացեք նրանց մոտ, ծանոթացեք նրանց կյանքին և աշխատանքին:



47. Ո՞վ և Լեւոնը

Առաջ մեզնում Խորհրդային իշխանութիւնը չկար: Բոլորին թագավորն էր կառավարում: Գեներալներն ու հարուստներն ոգնում էին թագավորին:



Բանվորները շատ վատ էին ապրում. առավոտը շուտ գործարաններն էին գնում ու ափսոսելով 12 ժամ աշխատում, իրիկունը շատ ուշ տուն էին գալիս՝ հոգնած, քաղցած:

Հարուստները լավ զարգարված տներում եյին ապրում ու վոչինչ չեյին անում: Իսկ բանվորներին աշխատանքի համար շատ քիչ փող եյին վճարում, հազիվ ցամաք հացի յեր ոգտում:

Ծանր եր բանվորների դրությունը:

«Ինչո՞ւ բան չանողը լավ ե ապրում, իսկ աշխատողը քաղցած մնում», — հարցնում եյին նրանք:

Յե՛վ բանվորներն սկսեցին կռվել այն բանի համար, վոր բոլորն աշխատեն, վոր գործարանները պատկանեն վոչ թե հարուստներին, այլ աշխատող մարդկանց:

Այն մարդիկ, վոր կռվում եյին աշխատավորների համար, հեղափոխականներ եյին կոչվում, իսկ հեղափոխականների առաջնորդը Լենինն եր:

* *

Նա ասում եր բանվորներին ու գյուղացիներին.

«Դուք վոչ թե հաց պետք ե խնդրեք թագավորից ու հարուստներից, դուք պետք ե զենք վերցրած գուրս գաք թագավորի ու հարուստների դեմ»:

Բանվորները հասկացան, վոր պետք ե միանան ու գյուղացիների հետ կռվեն հարուստների դեմ:

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ նրանք վռնդեցին հարուստներին ու բանվորների ու գյուղացիների իշխանություն հիմնեցին, վորը Խորհրդային իշխանություն ե կոչվում:

Այդ իշխանության առաջնորդ նրանք ընտրեցին Լենինին:



48. Պետյայի գրոսանքը

Իմ հայրը շոֆֆեր եր՝ Նա Լենինին եր ման ածում ավտոմոբիլով:

Մի անգամ յես կանգնած եյի մեր տան մոտ ու նայում եյի ավտոմոբիլին: Հայրս ավտոմոբիլում նստած սպասում եր Լենինին:

Յես կպա հորս, թե՛ ինձ ման ածա: Հայրս ասաց.



— Չի կարելի. շուտով Լենինը գալու յե:

Քիչ հետո Լենինը գուրս յեկավ ու ուղեց ավտոմոբիլ նստի, ինձ նկատեց, ասաց.

— Ո՞ւմ տղան ես:

— Իմն ե, — ասաց հայրս:

— Անունդ ի՞նչ ե:

— Պետյա:

— Դե, նստի՛, Պետյա, ավտոմոբիլով ման գանք:

— Ե՛, Վլադիմիր Իլյիչ, արժե՞ դրա հետ ժամանակ կորցնել, — ասաց հայրս:

Յես կարծում եյի, թե Լենինը կատակ ե անում, տեղս կանգնած եյի:

— Դեհ, շո՛ւտ, Պետյա, թե չե շտապում եմ. — բռնեց ձեռքս, նստեցրեց ավտոմոբիլը՝ իր կողքին:

Ավտոմոբիլը գնաց:

Յերբ մենք հասանք հրապարակին, Լենինը ինձ իջեցրեց ու ասաց.

— Նո՛ւ, Պետյա, վազիր տուն:

Յես վազեցի տուն ու մորս ասացի.

— Լենինի հետ ավտոմոբիլով ման յեկա. հետո յեւ պատմեցի իմ բոլոր ընկերներին: Վո՛նց եյին նախանձում:



49. Աշակերտի որատետրից

Հունվարի 21

Ի՞նչ ե պատահել. ինչո՞ւ այսօր դասարանը լուռ ե:

Աշակերտները քիչ են յեկել:

Վո՛չ. բոլորն ել յեկել են: Խուժը-խուժը քաշվել են անկյուններն ու կամաց քշփշուժ են, Լենինի մասին են խոսում:

Վոչվոք չեր հավատում, թե Լենինը մեռել ե:

Ժամը տասին դասարանները գնացին: Բացի Լենինից ուրիշ բանի մասին խոսել չեյին ուզում: Ժամը 12-ին հավաքվեցինք դահլիճ:

Նրանց պատմեցին, թե Վլադիմիր Իլյիչը վորքան ե աշխատել, վորքան ե կռվել, պայքարել հարուստների դեմ, թե նա ինչ ե արել բանվորներին ու գյուղացիներին ազատագրելու համար:

50. Մեր պսակը Լենինին

(Մոսկվայի մանկատան սանի պատմածը)


Յերբ մենք լսեցինք, վոր Լենինը մահացել ե, վորոշեցինք նրա համար պսակ հյուսել:

Յերկար աշխատեցինք, և հունվարի քսանվեցին, շաբաթ որը պսակն արդեն պատրաստ եր:

Յերեք տղա, յերեք աղջիկ ընտրեցինք, վոր պսակը տանեն:

Յես ել վեցի մեջն եյի:

Այդ որը շատ ցուրտ եր. տանից դուրս գալն անհնար եր. բայց վորոշեցինք՝ ինչ ել լինի, Լենինի պսակը տանենք:



Արագ-արագ գնում եյինք: Բայց յերբ մոտեցանք շենքին, ուր դրած եր Լենինի դագաղը, կանգնեցինք. շատ-շատ մարդ կար, հերթով եյին թողնում:

Սկսեցինք խնդրել, և մեզ առանց հերթի ներս թողին:

Մեր առաջից տանում եյին մի մեծ ու գեղեցիկ պսակ: Ի՞նչ վատ ու խղճուկ եր մեր պսակը: «Յերևի չեն ընդունի», — մտածում եյինք մենք:

Բայց յերբ հասանք Լենինի դագաղին, հերթապահը մեր պսակը դրեց Լենինի վոտների տակ, իսկ այն մեծ պսակը մյուս սենյակը տարան:

Մենք անցանք Լենինի դագաղի մոտով. նրա դեմքը շատ գունատ եր, կրծքին կարմիր շքանշան կար: Մենք անցանք, իսկ մեր յետևից բանվորները գալիս եյին ու գալիս:



51. Լենինի քաղաւր

(Մոսկվայի մի տղայի պատմածը)

Այսօր թաղեցին Վլադիմիր Իլիչին:



Յես շատ եյի ուզում թաղմանը ներկա լինել: Շատ վաղ արթնացա ու գնացի՝ հրապարակը:

Այն շենքի մոտ, ուր դրած եր Լենինի դագաղը, շատ մարդ կար:

Որը ցուրտ եր. յես միջանի անգամ յեկա տուն, տաքացա ու վերադարձա:

Լենինի դագաղն ուսերին՝ բանվորների շարքերը շարժվեցին դեպի Կարմիր հրապարակը: Թաղման մարշն եյին նվագում:

Ժամը 4-ին դագաղն իջեցրին դամբարանը:

Սուլիշները սուլում եյին, թնդանոթները կրակում: Ամբողջ Խորհրդային յերկրներում 5 բոպե դադարեց ամեն մի շարժում:


Խորհրդային յերկրների բանվորներն ու գյուղացիները թաղում եյին իրենց ամենասիրելի ու սուղիչին, ամենալավ բարեկամին:



52. Հունվարի 9-ը

Մեզնից տարիներ առաջ թագավոր կար: Նա յերյերկիրը կառավարում: Բանվորները շատ վատ եյին ապրում՝ սոված, մերկ, առանց ուսումի: Բայց չեյին հասկանում, Վոր թագավորն է բոլորի պատճառը, այնպես գիտեյին, թե նա բոլորի հայրն է: Այդպես սովորեցրել եյին նրանց տերտերներն ու տիրացուները: Որեցօր սովը սաստկանում եր, Ի՞նչ ունեյին. պետք եր գնալ թագավորի մոտ, ցավերը պատմել:

Նրան, վոր մի ճար անի: Բանվորները վերցրին սրբերի
 ու թագավորի պատկերները ու խմբով շարժվեցին
 դեպի թագավորի պալատը:



Բայց ինչպես ընդունեց թագավորը:

Նա ուղարկեց իր զորքն ու հրամայեց կրակել
 ժողովրդի վրա: Բանվորները զարմացան: Այդ օրը
 շատ բանվորներ, կանայք ու յերեխաներ սպանվե-
 ցին: Բանվորները նոր հասկացան, վոր թագավորն
 իրենց թշնամին է և վոչ թե հայրը, ու սկսեցին
 ատել նրան:



53. Վերջին փաթիլները

Չարաճճի ու կովարար
 փաթիլները պաղ ձյունի
 ուրախ խաղում, զարկում իրար,
 հրհրում են մին-մինի:

Ապա հոգնած իջնում գետին,
 գրկավում են իրար հետ
 ու ջուր կտրած, յերգով ուժգին
 առաջ վազում դեպի գետ:



54. Անցան

Հեյ ջան, անցան
 բուր ու բորան,
 ձմեռ պապին

ձյունի հետ.
 հոջն է խաղում
 սրա ու դաշտում,
 որը պայծառ,
 բուրավետ:

Հրես կգան
 շարան-շարան
 նախշուն հավքեր
 յերգեցիկ:




դաշտ ու անտառ,
այգի ու սար
շոր կհագնեն
գեղեցիկ:



55. Չնծաղիկ

Սառը ձյունի
սառը գրկում
մի ծաղիկ ե
ծյում, ծաղկում՝
թերը քնքուշ,
թերը սպիտակ,
աչիկները
բաց-կապույտակ:


Չյուն ու ծաղիկ...
այ բեզ զարմանք.
ձյուն ու ծաղիկ
ունեն մի կյանք.
դա ձմեռվան
մի ծաղիկ ե.
ձյունից ծնված
ձնծաղիկ ե:



56. Գարուն

(Կարգալու չե ուսուցիչը)

Կյանքն աղմկում եր, ուրախություն եր:
Ծանր ձմեռն անցել եր, ցուրտը կորել. յեկել
եյին գարնան տաք որերը:



Մենք շատ եյինք ուրախ. ձմռան ծանր շորերը
դեն գցեցինք, սկսվեցին գարնան խաղերը. դպրո-
ցում մեր աշխատանքները փոխվեցին. մեծ աշա-
կերտներն զբաղվեցին մեր դպրոցի հողամասով:
Մենք ել քարերը մաքրեցինք, մեզ համար մի ան-
կյուն վերցրինք. մարգերը սարքեցինք, աշխատան-
քը շատացավ: Ամեն մի խումբ իր գործն եր կա-

տարում, ամեն մի խումբ աշխատում էր իր ան-
կյունն ավելի լավ կազմակերպի:

Տան գործն էլ էր շատացել. խոտը հատել էր,
անասուններին հանդն եյինք տանում:

Փեթակների առաջ ծաղիկներ ցանեցինք: Մեր
դպրոցը պատրաստվում էր տոնելու ծառատունկի
օրը:

Մեր կենդանի անկյունում մենք լողունգներ
կպցրինք.

«Ամեն մի աշակերտ մի ծառ տնկի»:

«Պիոներ, յերկու ծառ տնկիր»:

«Տնկեցիր— ջրի, խնամիր»:



57. Յե՞րբ ե լինում

Ձյունն ե հալչում,

խոտը կանաչում,

ծաղիկը ծաղկում,

որը յերկարում:

Այս յե՞րբ ե լինում:




58. Ի՞նչ պետք է դիտել գարնանը

I. Գետք

1. Նշանակեցե՞ք՝ յե՞րբ ճեղքվածքներ յերևացին
ձեր գետի սառուցի վրա:

2. Ճանապարհների վրա յե՞րբ սկսեցին առվակ-
ները խոխոջալ:




II. Թռչուններ

1. Դիտեցե՞ք՝ ձյունից ազատված տեղեր կան:
Թռչուններ կան այնտեղ: Ի՞նչ թռչուններ են:

2. Նկարեցե՞ք նրանց:

3. Դիտեցե՞ք և նշանակեցե՞ք որացույցներում



արագիլների, կռուկների, սարյակների, հոպոպների
գալու ժամանակը:

III. Բույսերն ու միջատները

1. Ամենից շուտ ձյունը վճռեղ հալվեց:

Ի՞նչ տեսաք ձյունի տակ:

2. Դիտեցե՛ք՝ ի՞նչ միջատներ են թռչում ուռե-
նու շուրջը:

3. Նշանակեցե՛ք՝ յե՛րբ դուրս յեկան ուռենու
առաջին տերևները:

4. Վորոնեցե՛ք գարնան առաջին ծաղիկներն ու



բույսերը և նկարեցե՛ք (ձնծաղիկ, սիբեխ, թելուկ,
ալելուկ, ծներեկ, յեղնջնուկ):


5. Չափեցե՛ք ծառի վորևե ձյունը գարնանը,
ամառը և աշնանը:

6. Նշանակեցե՛ք՝ յե՛րբ առաջին անգամ տեսաք
մեղու, իշամեղու, թիթեռ, մայիսյան բզեզ, բզեզ,
Նկարեցե՛ք սրանք:

IV. Պարեզ, բանջարանց ու դառ

1. Նշանակեցե՛ք՝ յե՛րբ են ծաղկում խնձորենին,
տանձենին, սալորենին, բալենին, կեռասենին, և թե
ի՞նչը շուտ յերևաց—ծաղիկը թե տերևը:

2. Դիտեցե՛ք՝ նույն բողբոջներից են դուրս գա-
լիս ծաղիկներն ու տերևները, թե տարբեր բողբոջ-
ներից:



3. Գրեցե՛ք՝ յե՛րբ սկսեցին արտերը վարել, յե՛րբ
սկսեցին ցանել գարին, կորեկը, բրինձը, բամբակը:

4. Նշանակեցե՛ք՝ յե՛րբ սկսեցին վարել բանջա-
րանոցը:

5. Յե՛րբ տնկեցին կարտոֆիլը, կաղամբը, յե՛րբ
ցանեցին կոտեմը, բողկը, ռեհանը, պամիդորը, բա-
ղրջանը, պղպեղը: Վոր բույսը յե՛րբ շիթիլ արին:





59. Հատիկի զարթուելը

Յորենի հատիկը պառկած էր հողի տակ:

Յեվ հատիկի մեջ քնած էր փոքրիկ սաղմը: Քնած էր, ինչպես մի փոքրիկ մանկիկ տաք որորուցի մեջ. քնած էր ամբողջ ձմեռը:

Գարնան արևի շողը յեկավ տաքացրեց:

Յեվ հատիկի մեջ զարթնեց սաղմը: Զարթնեց, սաստիկ քաղց զգաց, սկսեց ծծել իր մոտի պաշարը: Ծծեց, ծծեց ու մեծացավ. պատռեց պարուրներն ու արմատները խրեց ցած, փափուկ հողի մեջ, նոր կերակուր փորոնելու:

Իսկ արևի ջերմությունը շարունակ քաշում էր նրան վերևից, ու սաղմը ձգվում էր դեպի այն կողմը, դեպի վեր:

Զգվեց, ձգվեց, ու նրա դալար ծիլը դուրս նայեց հողի մի կողմի տակից:

Ի՜նչ տաք էր, ի՜նչ պայծառ ու ի՜նչ ազատ նրա շուրջը:

Առավոտյան հովը քնքուշ գրկեց նրան, ցողի մի կաթիլ դրեց նրա կիսաբաց թերթիկին:



*
* *

Արի գնանք, յեզը ջան,
համ վար անենք, համ ել ցան,
աշխատանքի որերը
հրես յեկան, մոտեցան:

Գութանը դու կքաշես,
մաճկալդ ել կլինեմ յես,
են գլխիցը ես գլուխ
ես փեշակն ե պահել մեզ:



60. Յ ա ն ք ա ռ

Լավ իմացիր ցանքսի ժամանակը, չուշացնե՛ս,
ամեն մեկ որը հաշվի:

Այնպիսի յեղանակ ընտրիր, վոր վոչ չորային լինի,
վոչ խոնավ, վոչ ել սաստիկ քամի:

Հավ կանես՝ իրիկունը ցանես, վոր առավոտը հա-
տիկները ցողախառն տափնես:

Սերմն առաջուց պիտի պատրաստես: Ընտիրը
պիտի լինի, մաքուր, խոշոր, լիքը: Հավ ե՛ս սոված
մնաս, բայց լավ սերմ ցանես: Հավ սերմի արմատ-
ները խոր են գնում, ցրտից ու յերաշտից այնքան
չեն վախենում:



61. Հատիկ

Հուլիսը բացվում ե, շուտ արտը գնամ,
պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի,
իմ սիրուն հատիկ, բեզ նրան պահ տամ
մինչև որերը ամռան արևի:



62. Արոր

Ահա ծագեց կարմիր արև,
տաք և պայծառ ե որը.
դեհ, բաշեցեք, սիրուն յեղներ,
առաջ տարեք արորը:

Վարը վարենք, ահոս փորենք,
խոր ահոսներ հողի մեջ,
սերմը ցանենք, վոր հունձ հնձենք,
խուրձեր դիզենք կալի մեջ:

63. Գարուն

Ձմեռն անցավ,
յեկավ գարուն,
ձյունը հալվեց,
լցվեց առուն,
արև ծագեց
արևելքից,
ծիլեր բաշեց
գետնի տակից:
Ծառը պտկեց,
տվեց բողբոջ,

աղբյուրն հանեց
անուշ խոխոջ:
Արոտ գնաց
ծնած մաքին,
տվեց անուշ
կաթը ձագին:
Ծուկ ու մողես,
միջատ, գեռուն
արևն ելան,
յելան գարուն:



64. Զրվեմ

Քչբջալով սարի լանջից
ցած ե իջնում
շուրը բարակ.
ցած ե իջնում ձորի միջից,
դուրս ե փախչում
արագ-արագ...

Դուրս ե փախչում ձորի միջից,
առաջ վազում
վոլոր-մուր,
ժն ահավոր ու մուխ կիրճից
զալիս հասնում
անդունդը խոր...



65. Զուրը

Ամեն ջուր մեզ պիտանի չի: Զուր կա, վոր մեզ
փաստում է ու հիվանդացնում: Կենց վոր մարդ խմում
է, փորը ցավում է, լուծ է ընկնում, վարակիչ հի-
վանդություն է ստանում — խուերա, վորովայնի տիֆ:

Յերբ մարդ վատ ջրով է լվացվում, աչքերը
ցավում են, յերեսի ու կաշվի վրա բծեր կամ բշտիկ-
ներ են դուրս գալիս:

Ինչպես պիտի ճանաչել լավ ջուրը: Յեթե ջուրը
պարզ է ու ապակու պես թափանցիկ, յեթե նրա
մեջ կեղտոտություններ չեն լողում (մազ, ծղնոտ,
խոտ), յեթե ամանի տակ կեղտ չի նստում, ջուրը
լավն է, այդպիսի ջուրը վոչ գույն է ունենում. վոչ
հոտ, ու փաստակար չի:

Ամենալավ ջուրը աղբյուրների ջուրն է:



66. Առվակներ

Կլկլան առվակները
պլպլում են,
պլպլան առվակները
կլկլում են.
Կլկլում, պլպլում ու գնում են.
պլպլան առվակները
փրփրում են,
փրփրան առվակները
կլկլում են,
կլկլում, պլպլում ու գնում են:

67. Մեր պարտեզը

Մեր պարտիզի գետինը կակղել էր, ձյունը հալվել,
վերջացել էր: Թռչուններն արդեն յեկել էյին:

Մի որ գնացինք, վոր տեսնենք՝ ծառերը պտկել
են, թե վոչ: Խնձորենին, կեռասենին ու տանձենին
արդեն պտկել էյին: Հայրիկս նորոգում էր ցան-
կապատը, վոր հավերը պարտեզը չմտնեն:

— Յերեխեք, ցաքատը պետք է սրել տալ, չոր ձյու-
ղերը կտրելու ժամանակը մոտ է, — ասաց հայրիկս:

Որ չեր վինի, վոր նա պարտեզ չգնար, մի բան
չաներ:

Պարտիզի գլուխցավանքը շատ է, բայց ամառն
ինչքան լավ է:



68. Մեր պատուհանի պարտեզը

Գարնան սկզբին մենք վորոշեցինք դասարանում
բույսեր ցանել: Վերցրինք չորս ծաղկաման. առա-
ջուց թրջեցինք լոբու, սիսեռի, ցորենի սերմերն ու
ցանեցինք ծաղկամաններում:


Յերեք ծաղկամանը հերթապահն ամեն որ ջրում
էր, իսկ չորրորդը վոչ:

Յերեքում միքանի որից հետո կանաչ ծիլեր
յերևացին, չորրորդում վոչ մի փոփոխություն չկար:

Մենք հողը փորփրեցինք և տեսանք, վոր սեր-
մերն ինչպես ցանել եյինք, այնպես ել մնում եյին:

Մենք հասկացանք, վոր սերմն առանց ջրի չի
կանաչի:

- Ել ինչ ե հարկավոր բույսերին:
- Դո՛ւք ել փորձեր արեք:
- Դիտեցեք. ձեր դիտողությունները գրեցեք որատետրում:



69. Ծառատունկը

Մեր դպրոցը պատրաստվում ե շուքով տոնելու
ծառատունկի օրը:

Մեծ աշակերտները գրել եյին «ԱՄԵՆ ՄԻ Ա-
ՇԱԿԵՐՏ ՄԻ ԾԱՌ ՏՆԿԻ» և կպցրել եյին դպրոցի
դռանը:

— Բա՛ դուք ի՞նչ եք անելու, — հարցրեց ուսու-
ցիչը:

— Ինչ վոր ասեք՝ կանենք. փոս ել կփորենք,
ծառ ել կտնկենք, ջուր ել կկրենք, — պատասխանե-
ցինք մենք:

— Լավ, — ասաց ուսուցիչը, — մենք աշխատանքն
այնպես կբաժանենք, վոր ձեզ հեշտ աշխատանք
ընկնի. դուք դեռ փոքր եք:

Մենք վորոշել եյինք՝ ճանապարհի յերկու կող-
մը ծառեր տնկենք:

Մեծ աշակերտները փոսեր փորեցին:

Փոսերն եղպես միքանի օր մնացին:



Կիրակի օր եր. Շատ մարդ եր հավաքվել. մենք
եյինք, կոմյերիտականները, կուսակցականները, կա-
նայք. բոլորս ել կարմիր դրոշակներով:

Տնկիները բերել եյին պատրաստել. սկսեցին
տնկել: Զուռնեն ածում եր:

Մենք ուրախ-ուրախ աշխատում եյինք. իսկա-
կան տոն եր. 300 ծառ տնկեցինք:


- Պատրաստեցեք ծառատունկի տոնին:
- Տնկիներ ձեռք բերեք:
- Ձեր դպրոցի բակում ու դպրոցի շուրջը ծառեր տնկեցեք:

- Գլուղացիների հետ մասնակցեցե՞ք ծառատունկի տոնին։
— Պահպանեցե՞ք անտառները։



70. Գարուն

Զուգվել են կրկին
անտառ ու այգի,
վշտում ե ուժգին
շուրը գետակի։
Հավերժը սիրուն
համերգ են կազմել,
արտում ու հանդում
յերգ ու հորովել։
Թիթեռներն ուրախ
թռչում են դեռ-դեռ.
Նա՛ն, տեսքիդ մատաղ,
գարուն ե արդեն։



71. Աշոտի ձեռնափայտը

1

Աշոտն ու Տիգրանը մի անգամ այգի գնացին, ուռենու ճյուղերից իրենց համար փայտեր կտրեցին։ Յերբ առվի ափին նստած խոսում էին, Տիգրանն իր փայտը դեն գցեց, իսկ Աշոտը տնկեց առվի ափին փխրուն ու խոնավ գետնի մեջ։

Անցավ միքանի ամիս։ Ամառվա վերջն էր։ Տիգրանը մի անգամ մենակ նույն տեղը յեկավ և յինչ տեսնի՝ Աշոտի տնկած փայտը ճյուղեր ե տվել. ուրախացավ և այդ որից սկսեց խնամել նրան։ «Թող աճի, Աշոտից հիշատակ կմնա», — մտածեց նա։

2

Շատ տարիներ անցան։

Աշոտն ու Տիգրանը կրկին միասին յեկան այդ կողմերը զբոսանքի։ Աշոտը նկատեց առվի ափին մի



գեղեցիկ կանաչ ուռենի, վոր ճյուղերը կախել էր ջրի վրա. — «Յեկ նստենք այս ուռենու տակ», — առաջ նա Տիգրանին։

— Յես հաճախ նստում եմ ու քեզ հիշում. — պատասխանեց Տիգրանը։

— Ինչո՞ւ ինձ,— հարցրեց Աշոտը:

— Հիշում ես, վոր ուռենուց կտրածդ փայտը տնկեցիր այստեղ: Ահա այն փայտն է, վոր աճել, ուռենի յե դարձել. մենք այժմ նրա տակն ենք նստած:

— Ուռենու ճյուղեր բերեք, տնկեցեք ձեր առվի ափին:

72. Պահապաններ

Գարուն է. արևը տաքացնում է: Պապիկը նստած արկղ է շինում տախտակներից:

— Ի՞նչ ես անում, Պապիկ:



— Տնակ եմ շինում, տնակ, շուտով պահապանները կգան, պետք է տեղ տալ նրանց:

— Ի՞նչ պահապաններ, ո՞վքեր են:


— Միթե չգիտեք. մեր ժիր, խելոք սարյակները, վոր մաքրում են բանջարեղենը վորդերից ու խխունջներից:

— Ել ի՞նչ ոգտավետ թռչուններ գիտեք:



73. Պատիկ ծիտը

Պատիկ ծիտ եմ
ծախ ցեղից,
Ծաաստանի
Ծառց գեղից:
Իմ պապերին
ծիտ են ասել,
ծիտ անունը
ինձ է հասել:
Հիմի ել յես
ծիտ պապիս պես
կծկվամ,
կթռվում:



74. Մեր քանչարանոցը

Յերբ դպրոցի բակը խմբերի բաժանեցին, մեզ ել մի կտոր հող տվին:

— Տեսնենք՝ դուք ինչ եք անելու, — ասում էին մեծ աշակերտները:

Մենք չգիտեինք ինչից սկսենք, ինչ ցանենք:

Գործն առաջ չեր գնում:

— Յեկեք ձեզ ոգնեմ, — ասաց Վարդանը:

Նա շատ բան գիտեր, պիտներ էր:

Նրա հետ մենք մեր հողամասը մարգերի բարանեցինք:



Հետո այդ հողը փեյնեցինք, քարերից մաքրեցինք. Վարդանը մեզ սերմեր տվեց. ինքը տանը թրջել էր, ու սերմերն արդեն ծլել էին:

Ցանեցինք լոբի, սիսեռ, տակ, բողկ, տեսակ-տեսակ ծաղիկներ:

Մի քանի գլուխ սոխ ել տնկեցինք: Զրեցինք, հեր-

թապահներ նշանակեցինք՝ մեր բանջարանոցին հրակելու համար:

— Տեսեք ես առաջիններին, ե, վերջը գործը գլուխ բերին, — ասում էին մեծ աշակերտները մեր բանջարանոցի կողքով անցնելիս:

- Ձեր դպրոցը բանջարանոց ունի:
- Ձեր խումբն իր անկյունն ունի:
- Ի՞նչ եք ցանել ձեր անկյունում:
- Ի՞նչպես եք բաժանել ձեր մեջ աշխատանքը:
- Ի՞նչպես եք հետևում բանջարանոցին:



75. Պարտիզի յեւ քանչարանոցի վնասատուները

Յերբ թրթուռները դուրս գան, կտրեցեք ծառի կամ բույսի ճյուղը, վորի վրա թրթուռ ե նստած. բերեք դպրոց, շուրը դրեք ու տուփով ծածկեցեք: Տուփի մի պատը կտրեցեք, տեղը թանգիֆով փակեցեք. մյուս պատերը մախաթով ծակծկեցեք:

Դիտեցեք և պատասխանեցեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ ե թրթուռը — տերև ե, ծաղիկ, թե՞ մի ուրիշ բան:

2. Բույսին ի՞նչ վնաս ե տալիս:

3. Փնտռեցեք այդ վնասատուի հետքերը ձեր բանջարանոցում կամ պարտիզի ծառերի վրա:

4. Դիտեցեք՝ ո՞վ է ոգնում մարդուն այդ փա-
սատուի հետ կռվելու: Այդ նպատակով գնացեք
բանջարանոց կամ պարտեզ ու հետևեցեք՝ ի՞նչ թռ-
չուններ են հավաքվում այնտեղ և ի՞նչ են անում:
Յեթե գիտեք նրանց անունները, նշանակեցեք:
Յեթե նկատեք այնպիսի թռչուններ, վորոնց առաջ
յերբեք չեք տեսել, նշանակեցեք նրանց մեծությունը,
գույնը, դիտեցեք՝ ի՞նչ են անում պարտիզում և այս
բոլորը նույնպես գրի առեք:

76. Անճողների ճուտիկը

Յերեք շաբաթ թուխսը վեր չեր կենում ձվերի
վրայից: Տասներկու բրդոտ ճուտեր դուրս ելին
յեկել, մնում եր միայն մի կանաչագույն փոքրիկ ճու:

Վերջապես մի առավոտ թուխսը նկատեց, վոր
ձվի ներսից մեկը թրխկթրխկացնում է: Սաստիկ
ուրախացավ, իսկույն շարդեց ճուն իր ամուր կտու-
ցով, ու միջից դուրս յեկավ ճուտիկը:

Սա նման չեր մյուս ճուտիկներին: Ավելի բրդոտ
եր, ավելի դեղին, վոտիկները կարճ-կարճ, գլուխը
լայն, կտուցը տափակ:

— Ես ի՞նչ անճողնի յե,— մտածեց մայրը, մի
քիչ տխրեց, բայց շուտով ինքն իրեն սիրտ տվեց
թե՝ վոչինչ, կմեծանա, կգեղեցկանա:

Հավաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպարտ-
հպարտ կորխկալով տարավ նրանց առվի ափը քուջուջ
անելու: Անճողնի ճուտիկը շուրը տեսավ թե չե, ըն-
կավ մեջը:

Մայրը սարսափած ճշում եր, կանչում, թները

թափ տալիս, նետվում դեպի շուրը: ճուտիկներն ել
ծվում ելին, դես ու դեն ընկնում:

Իսկ անճողնի ճուտիկը թեթև շարժում եր իր
թաղանթավոր թաթերը ու հանգիստ լող տալիս ջրի
յերեսին:

Պառավ նանը լսեց թուխսի ճիչն ու բակի աղ-
մուկը. դուրս վազեց, տեսնի՝ ի՞նչ է պատահել, ու
խփեց ծնկանը.

— Վա՛յ, քոռանամ յես. ես ի՞նչ եմ արել. հավի
տակ բաղի ճու յեմ դրել:

— Քանի որ է հավը թուխս նստում:
— Իսկ բաղը, սաղը:



77. Դժվար հանելուկ

Պուղին թաշկինակով տասը ճու յեր տանում
տուն: Ճամպին պատահեց իր ծանոթին ու ասաց.

— Թե իմանա՛ թաշկինակումս ի՞նչ կա, սրա
ձվաձեղից քեզ ել կուտացնեմ:

— Չու,— պատասխանեց ծանոթը:

— Վահ,— զարմացավ խելոքը.— եդ վա՛նց իմա-
ցար: Դե ես ել ասա, քանի՞ հատ է: Թե եդ ել իմացար,
բոլոր տասն ել քեզ կտամ:

— Տասը:

— Առ, ախպեր, եդ ել իմացար,— ասավ Պուղին
ու թաշկինակով ճուն տվեց ծանոթին:



78. Կովն ու գիւագոսավը

Մեր կովը բազն էյին կապել, խոտ եր ուտում:
Մեկ ել հանկարծ մի գիւագոսավ յեկավ, մեջքին նըս-
տեց ու սկսեց մեջքը կտցել:

Չլինի թե կովի մեջքը ցավացնի:

Իսկի յել չի:

Կովը հանգիստ կանգնել ե իր համար, խոտ ե ու-
տում, իսկ գիւագոսավը կտցում ե հա կտցում:

Բայց ինչո՞ւ:

Ահա թե ինչու: Այժմ գարուն ե, կովերը փո-
խում են իրենց մազը. գիւագոսավը ել գարնանը
բուն ե շինում. մազ ե պետք, վոր ձվերի համար
տաք տեղ պատրաստի: Գիւագոսավը հանում ե կովի
հին մազերը. համ նրան ե ոգուտ տալիս, համ իրեն.
կովի կաշին քոր ե գալիս, պատերին ու ծառերին ե
քսվում, վոր հին մազերից ազատվի:

Գիւագոսավը թռավ: Կտցին մազ կար: Տարավ
բունը: Չվերը տաք տեղ կունենան: Եղ ձվերից հետո
փոքրիկ ճուտեր դուրս կգան:

79. Լորիկ

Առավոտուն փչեց հով,
արտը ծփաց, դարձավ ծով.
արտի միջից թռավ լոր,
թռավ, ընկավ ձորե-ձոր:

Լորիկ, լորիկ, ես տարի
արտս արել եմ գարի.
ուր վոր երթաս՝ շուտ արի,
արտիս միջին ծվարի:

80. Թռչուններ

ԸՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Հավը, բազը, սագը, — ել ի՞նչ ընտանի թռչուն-
ներ գիտեք:

ՅԵՐԳՈՂ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Սոխակը, կկուն, կռունկը, — ուրի՞շ:

ՎԱՅՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Բուն, ուրուրը, — ուրի՞շ:

*
**

1. Ի՞նչ լողացող թռչուններ գիտեք:

2. Ի՞նչ ձև ունեն նրանց թաթերը:

3. Ի՞նչ թռչուններ են ապրում ճահիճներում.
Ի՞նչ ձև ունեն նրանց վոտքերը, վիզը, կտուցը:

4. Թռչունները տարվա վո՞ր ժամանակն են բներ
շինում:

5. Թռչունները ինչի՞ց են բներ շինում:

6. Ի՞նչպես պետք ե ճանաչել լավ ձուն՝ առանց

ջարդելու:

7. Սովորեցե՞ք կավից թռչուններ շինել:



81. Վոչխարները

1

Գարնանը, յերբ ձյունը հալվեց, կանաչ խոտը բուսավ, մեր վոչխարները արածելու դուրս յեկան։

Գարնան սկզբին վոչխարները ծնեցին. ամեն մեկը մի գառ բերեց. միայն մեկը յերկու գառ ունեւր։ Վոչխարներին Սաքոն եր հանդը տանում, գառներին՝ յես։



Հանդում գառներն արածում եյին, յես ել շվի եյի փշում, մանուշակ քաղում, փնջեր անում, բերում, մորս տալիս։

Կեսորին հոտերը բերում, խառնում եյինք իրար, մեր տալիս. կանայք կթում եյին, կաթը լցնում մեծ կաթսաները։

2


Յերբ շոգն ընկավ, հայրս ու Սաքոն մեծ-մեծ յերկար մկրատներով խուզեցին վոչխարների բուրդը. յես ոգնում եյի նրանց, իսկ մայրս ու քույրս ել բուրդը հավաքում եյին, տոպրակները լցնում։

Հետո քույրս այդ բուրդը լվաց, գզեց, իսկ մայրս թել մանեց։

Այդ թելից մեզ համար տաք վերնաշապիկներ, գուլպաներ, ձեռնոցներ գործեցին, քույրս իր համար շալ գործեց։

Մնացած թելերը մայրս գույնզգույն ներկեց, վոր ձմեռը կարպետ, խալիչա գործեն։

— Բրդից դատ վոչխարն ել ինչ ե տալիս։



82. Սարի լանջը

Սարի լանջը մահճակալ,
ուխանյ, ուխանյ, ինչ փափուկ ե,
չեչոտ քարը գլխակալ,
ուխանյ, ուխանյ, ինչ կակուղ ե,
մի հին կարպետ ուսերին,
ուխանյ, ուխանյ, ինչ նախշուն ե,
այս ե հովվի անկողին,
ուխանյ, ուխանյ, ինչ սիրուն ե։

83. Ինչպես մեկը խուզվեցինք

1

Մեր բոլորի մազերը յերկարել ու խճճվել եյին։ Բժիշկը բացատրեց, թե յերկար մազերը կեղտ ու փոշի յեն հավաքում, գլուխը լավ չի մաքրվում լվա-նալիս։ Վորոշեցինք բոլորով խուզվել։ Բայց ինչպես, ինչո՞վ և ո՞վ պիտի խուզեր։

Թե մկրատն առնես ու խուզես, բոլորի գլուխները բոստան-բոստան կանես, լավ չի։

Ուսուցիչն ասաց. «Մեքենա կճարեմ, մեծերից մեկը թող բոլորիդ խուզի»։

Զարմացած մնացինք, թե եզ ինչ մեքենա յե:

2

Յես կարծում եյի, թե մեքենան կլոր պղնձի պես մի բան կլինի, գլուխներս կկոխեն այնտեղ ու խուզված կհանենք: Յերբ յերեք որ հետո ուսուցիչը բերեց մեքենան, բոլորս ձայն տվինք. «Հը՛մ, այ թե ինչ պիտի մեքենա յե. կարծում եյինք՝ սարսափելի բան կլինի»:



3

— Այսոր դասերից հետո պիտի խուզվենք, — ասաց ուսուցիչը. — ով առաջինը կհաստի:

— Յես, յես, յես... — լսվեցին միմյանի ձայներ:

Ամենից առաջ հաստեց Անտոնը. ահանջները մազերի տակ չեյին յերևում: Ուսուցիչը լրագիրն անցկացրեց Անտոնի վիզը, մեկն ել փռեց վոտքերի տակ ու սկսեց խուզել: Հետաքրքրությամբ նայում եյին:

Մեծ աշակերտները մեջ ընկան, սկսեցին փորերին խուզել:

Մյուս որը բոլորիս գլուխները մաքուր եյին:

- Ձեր խմբում բոլորը խուզված են:
- Ամիսը մի անգամ խուզվեցեք:
- Ձեր կոոպերատիվի փողերով դպրոցի համար խուզելու մեքենա գնեցեք:



84. Մանուշակ

Կապույտ գլխով, կանաչ փոքրով, յես ծաղիկ եմ անուշ հոտով: Թեև տունկս փոքրիկ ե, ցած, թփերի տակ միշտ թագ կացած, բայց իմ փունջը իբրև զարդ տեսնում ե միշտ ամեն մարդ. յես եմ սիրուն զարնան գուշակ, իմ անունս ե մանուշակ:



85. Մեղուները

Գարունը յեկա՛ւ. արևը հալեց, փախցրեց դաշտերի ձյունը: Որը տաք եր, արևը վառ:

Մեղուները փեթակից դուրս յեկան, թռան խրնձորենու մոտ:

— Մի՞թե խնձորենին խեղճ մեղուների համար վոչինչ չաւնի. չե՞ վոր նրանք ամբողջ ձմեռը սոված են յեղել:



— Վնչ, մեղուները շատ շուտ են դուրս թռել. դեռ խնձորենու ծաղիկները թաքնված են բողբոջների մեջ:

Մեղուները թռան դեպի բալենին:

— Մի՞թե բալենին ծաղիկներ չունի խեղճ մեղուների համար:

— Միքանի որ հետո գան՝ գուցե լինի. այդպես շուտ վոչ մի ծաղիկ բացված չի լինի:

Մեղուները թռան կակաչի մոտ, մտան նրա

գունավոր բաժակը, բայց այնտեղ վոչ մեղր կար, վոչ հոտ:

Խեղճ մեղուները սոված, տխուր ուղում եյին յետ թռչեն փեթակը, յերբ հանկարծ թփի տակ տեսան մուգ-կապույտ փոքրիկ ծաղիկը — մանուշակը:

Մանուշակը բաց եր, մեջը լիքը քաղցր, բուրավից հյութ:

Մեղուները կերան, խմեցին, յետ թռան կուշտ, ուրախ:



86. Մեղու


Գարուն, ամառ ամեն որ
նա գնում ե դաշտ ու ձոր,
աշխատում ե միշտ անվերջ,
մեղր ե փնտռում ծաղկանց մեջ:
Իսկ յերբ փչե ցուրտ բամին,
ծաղիկներն ել թառամին,
նա իր ժողված պաշարով
կապրի ձմեռն ապահով:

— Ել վոր միջատներն են ձմեռվա պաշար հավաքում:




87. Մեղու

Պզզան, պզզան, պզպզան,
պստիկ մեղու տղտղան.
դաշտ ու հովիտ կըրջես,
բարձր սարեր կթռչես
ու վոտներով թավամազ
փոշի առած տուն կգաս:



88. Անկյունու

Մուկուշը կանգնած էր տան անկյունում. տես-
նում է վոստայն, սարդն էլ վրան. ենքան էլ թա-



թեր ունի, յերկար, շատ յերկար: Սարդը մոտեցավ
վոստայնի ծայրին ու հանկարծ ընկավ:


— Կփռասվի, — մտածեց Մուկուշը: Մեկ էլ տե-

սավ ցածուժ մի ուրիշ վոստայն՝ բարակ թելով
միացած վերևի վոստայնին. հենց այդտեղ էլ նստեց
սարդը:

— Տես, յերկու հարկանի տուն ունի. — մտածեց
Մուկուշը: Հանկարծ «թոփ» — վերին հարկը միան-
գամից յերկու ճանճ ընկան: Մեկը փախավ, մյուսը
խճճվեց մնաց:

Վերևի վոստայնը ցնցվեց ու շարժեց ցածի վոս-
տայնը այն թելով, վորով սարդն իջել էր: Սարդը
կծկվեց ու հանկարծ սկսեց արագ-արագ բարձրա-
նալ թելով: Ճանճը թափ տվեց իրեն, պուկ յեկավ
ու թռավ: Մուկուշն ուրախացավ, վոր ճանճն
ազատվեց:

— Դիտեցե՛ք սարդը, նկարագրեցե՛ք:



89. Ընկերոջն ազատելու համար

Մըջյունները ճանապարհի վրայով անվերջ գնում
ու գալիս էին. ամեն մեկն իր գործին էր: Չարաճճի
Հայկը վերցրեց կավի մի փորրիկ գնդիկ ու դրեց
մըջյուններից մեկի վրա: Խեղճ մըջյունը չէր կա-
րողանում տակից դուրս գալ: Իսկ Հայկը նայում
էր, թե ինչ կլինի:


Գնում են ու գալիս մըջյունները, բայց խեղճին
չեն նկատում. ամեն մեկն իր գործին էր: Բայց ահա
մի մըջյուն կանգ առավ, տեսավ, վոր ընկերը

վտանգի մեջ է, ուղեց ոգնել նրան կավի տակից
դուրս գալու: Շատ չարչարվեց, չկարողացավ: Արագ-
արագ վազեց ինչ-վոր տեղ:



Քիչ անց շատ մըջյուններ թափվեցին ոգնու-
թյան. հավաքվեցին գնդիկի շուրջը: Մեծ է կավե
սարը, բայց չէ՞ վոր մըջյունները շատ են: Նրանք
միասին աշխատանքի կպան: Մի-մի կորեկի շափով
կոշտը քանդում են ին ու տանում, դեն գցում: Շու-
տով ամբողջ կավը կրեցին, և մըջյունը ազատվեց:

— Իհտեցեք մըջյուններին:



90. Մեր կոռնուհան


Յես տասներկու տարեկան էի: Մորս հետ ապ-
րում էի Աշտարակում: Մայրս մանկատանը ըվա-
ցարարուհի յեր: Նա հիվանդացավ, ինն որ պառկեց
ու մեռավ:

Յես շատ լաց յեղա:

Հետո մորս թաղեցին, իսկ ինձ ընդունեցին ման-
կատուն:

Շատ լավ եր մանկատանը. այնտեղ սովորում

էի, բայց ելի հաճախ հիշում էի մորս. ուղում էի
լաց լինել, բայց չէի լալիս, վորովհետև պիտեք էի:
Աշտարակից վոչ հեռու մի գյուղ կա—Թաքիա



յե կոչվում: Մեծ վորքերն այնտեղ կոմմունա ու-
նեցին: Իրենք էին վարում, ցանում, բանջարանոց
պատրաստում:

Աշտարակում յես ապրեցի չորս տարի:



Բայց ահա մի անգամ մեզ մեծահասակներին
կառավարիչը կանչեց ու ասաց.

— Յերեխեք, ուղում եք կոմմունա գնալ. այն-
տեղ այս բոլորիս աշխատողների կարիք կա. շատ
հողեր են ստացել, մշակելը չեն հասցնում:

Մեզնից միայն յերեքը չուղեցին. արհեստավոր
էին ուղում դառնալ:

Մյուսներս ուրախությամբ համաձայնեցինք և սկսեցինք ճանապարհվելու պատրաստություն տեսնել:

Կիրակի յեր: Հավաքվեցինք, բոլորին մնաս-բարև ասացինք: Գառավարիչը ճառ խոսեց. ասաց, վոր մենք կյանք ենք մտնում, ու հաջողություն ցան-



կացավ մեզ: Մենք լաց յեղանք, հետո նորից ուրախացանք ու ճանապարհ ընկանք:

Ճաշի մոտ մենք արդեն կոմմունայում եյինք: Աշխատանքը յեռում եր, բոլորն աշխատում եյին:

Մեկը փորում եր, մեկը մարգեր եր պատրաստում, մեկը հատիկներ մաքրում:



Ուրախ ղիմավորեցին մեզ, տեղավորեցին. մեր համբերությունը հատնում եր. իսկույն աշխատանքի կպանք:

Սկզբում մեզ համար ծանր եր, բայց հետո վարժվեցինք և մեզ շատ լավ եյինք զգում:

Մեր կոմմունան որեցոր լնդարձակվում ե. նոր տներ ենք շինում, նոր մարագներ: Այս տարի մեզ համար դպրոց շինեցինք. բոլորը գյուղատնտեսություն են սովորում:

Յերբեմն գալիս եյինք Աշտարակ մեր փոքրահասակ ընկերների մոտ ու միասին ուրախ ժամանակ անցկացնում:



91. Պետական ապահովագրությունը

Մեր գյուղը սարի ծերին ե. ամեն տարի մեր արտերը կարկուտը տանում ե:

«Վորտեղ կորած կարկուտ կա, մեր գյուղի վրա վեր կգա»,—ասում են գյուղացիք:

Մի անգամ մեր գյուղը մի հրահանգիչ յեկավ. ասաց՝—Յես Պետապի կողմից եմ յեկել. ձեր արտերը ապահովագրեք. յեթե կարկուտը տանի, պետությունը ձեր փաստը կտա:

Գյուղացիք կասկածում եյին. ով գիտի՝ մեզնից փող են պոկում. բայց մտածեցին, խոսեցին, վերջը վորոշեցին ապահովագրել ցանքսերը:

Ելի կարկուտ յեկավ, արտերը սրբեց, տարավ: Գյուղացիք անհայ մնացին:

Պետապը վրա հասավ. փաստները տվեց: Գյուղացիք աչքներին չեյին հավատում, բայց փողերը գրկապանում զրնգում եյին. չհավատալու ել ինչ կար:

Գյուղ-վարկային ընկերութիւնն ել ոգնեց. գյուղից փող հավաքեց ու Ռուսաստանից լավ, եծան ցորեն բերել տվեց:

— Ես կարկուտի ձեռից խորհրդային իշխանութիւնը մեզ լավ ազատեց, — ասում եյին գյուղացիք:

— Անասուններն ել ապահովագրենք, մեր ոգուտըն ե:

— Ձեր գյուղի արտերն ապահովագրված են:

— Ել ինչ կարելի չե ապահովագրել:

— Հարցրեք ուսուցչին՝ ինչ ոգուտ ե տալիս ապահովագրութիւնը:

— Կարգացեք խրճիթ-ընթերցարանում պետական ապահովագրութեան կանոնները:

92. Մայիսը

Զուգված, զարգարված
Թավիշ կանաչով
ցոլում են դաշտեր
վոսկի ճաճանչով:

Մայիսը սիրուն
Գոհար ե մաղել,
Թերթերը ծաղկանց
ցողով շաղախել:

Հազար հազարով
Թռչուն ե յերգում—
դաշտերը կանաչ
գնդում-զընգում:



93. Մայիսի մեկի մասին

Մենք դասարանում ծաղիկներից ու կանաչ ճյուղերից շղթա եյինք հյուսում: Մյուս որը մայիսի մեկն եր:

Պետք ե զարգարեյինք դպրոցը, մենք ել կարմիր դրոշակներով մասնակցեյինք շքերթին:

— Յես մայիսի տոնը շատ եմ սիրում, — ասաց Հրաժինը, — տաք ե, շատ ծաղիկներ կան, դրոշակներ, յերգ, նվագ:

— Ընկեր Սոֆիկ, — ասաց Լուսիկն ուսուցչուհուն, — յերբ դուք սովորում եյիք, ինչպես եյիք տոնում մայիսի մեկը:

— Մենք այդ որը դաս եյինք սերտում. մեզ թվանշաններ եյին դնում, պատժում, անկյունը կանգնեցնում: Տոնի մասին — վոչ մի խոսք. իմ հայրը բանվոր եր: Մի անգամ նա ինձ իր հետ տոնելու տարավ. բանվորներն անտառում հավաքվել եյին իբր թե քեֆի, բայց ժողով արին: Ժողովից հետո շարքերով անցան քաղաք. նրանց դրոշակների վրա գրված եր՝

«Ութ ժամվա բանվորական որ ենք պահանջում»:

Քաղաքում վոստիկանները նրանց ցրեցին:

Մի քանիսին բանտարկեցին:

— Առաջ ալդպես եր: Իսկ հիմա:

— Դուք ինչպես եք տոնելու մայիսի մեկը:

— Կազմեցեք տոնի ծրագիրը:

94. Մանկական ինտերնացիոնալ

Յերգով շարժվենք մենք մանուկներս—
գնանք մեր տունը մանկական.
Թռչնի յերգի պես տարածվեն թոզ
յերգերը մեր—թոզ թռավրոն:
Ահա շողում ե արեգակը,
այգում փրփել են կանաչներ.
Թռչունն իր յերգը բսկրսել ե.
ցողով ծածկվել են տերևներ:
Մեր թույլ վոտքերը միշտ քայլում են,
մանուկ սրտեր ենք մենք կրքում.
գեպի ուսումն ու գիտությունը
գնում կամքով մեր ընդհանուր:



95. Առաջին խումբը պատրաստվում է դպրոցական ցուցահանդեսի

Մոտե դպրոցական տարվա վերջը: Վրա յե համուժ
ամառվա արձակուրդը: Ամբողջ դպրոցը ցուցահանդե-
սի յե պատրաստվում: Հանգիստ ու դադար չկա: Ամեն
մի խումբ ուզում ե իր աշխատանքը ցույց տալ:

Մեր առաջին խումբը յետ չի մնում մյուսներից:
Միջանիսը տերևներ ու ճյուղեր են կպցնում աշնան
տախտակի վրա, ուղղում են բնության որացույց-
ները, կավե ծեփվածքները, մյուսները հավաքում ու
դասավորում են նկարներ, վոմանք ել դարակներ
են պատրաստում:

Ցուցահանդեսի յեռյակը մեզ պատվիրել ե 30
դրոշակ ե թղթե շղթաներ պատրաստել:


Բայց ամենից գլխավորն ե՝ մեր բաժնի վերևը
մեծ ու գեղեցիկ տառերով գրել:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿ

- Դուք ել ցուցահանդես կազմակերպեցեք:
- Հրավիրեցեք գյուղացիներին:

96. Առաջին խումբը դպրոցական ցուցահանդե- սում

Վերջապես ցուցահանդեսը պատրաստ ե:
Կենդանի անկյունը նախասենյակում թողինք:
Դասարանից դուրս բերինք սեղանները, պատերը
սրբեցինք, հատակը մաքուր լվացինք: Պատերի մոտ
սեղաններ դրինք:



I ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Դժվար ե մեր դասարանները ճանաչել. մի ան-
կյունից մյուսը ձգված են գունավոր շղթաները,
պատերի վրա կարմիր դրոշակներ են ամրացրած:

Մեր խմբին շատ լավ տեղ են տվել ձախ անկյունում. մենք վերևը մեծ տառերով գրեցինք—

I ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Պատի վրա ամրացրած են մեր լավ նկարները, տախտակները, պլակատները. սրանց տակը, սեղաններին ու դարակներին վրա դարսած են մեր տետրերը, կավե ծեփվածքները և ուրիշ աշխատանքներ:

Ուզում եյինք Լենինի պատկերն ել կախել, բայց մեզ ասացին, վոր ավելի հարմար է տեղավորել Լենինյան անկյունում. մենք համաձայնեցինք:

- Դուք ել տարեկան ցուցահանդես կազմակերպեցեք:
- Գրեցեք այդ ցուցահանդեսի մասին:

97. Լենինյան անկյունը ցուցահանդեսում

Մեր ցուցահանդեսի ամենագեղեցիկ մասը Լենինյան անկյունն է: Լենինյան անկյունը կազմակերպող յեռյակը ցուցահանդեսից առաջ բոլոր դասարաններում հայտարարություն են կախել:

«ՀԱՎԱՔԵՑԵՔ ՈՒ ԴՊՐՈՑ ԲԵՐԵՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ»:

Բերում եյին պատկերներ, նկարներ՝ լրագրերից ու գրքերից հանած, վոտանավորներ, իրենց գրածները Լենինի մասին: Մի քանիսը Լենինի մասին գրքեր եյին բերել: Մեկն ել Լենինի արձանն էր բերել:

Անկյունում Լենինի պատկերներն եյին. Լենինը յերեխա ժամանակ, Լենինը ճառ ասելիս, Լենինը


դադաղում, թաղումը և ուրիշ նկարներ: Մեծ աշակերտները մի պլակատ եյին կախել, վրեն գրված էր.

ԼԵՆԻՆԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՎ ԲԱՐԵԿԱՄՆ Ե.

ՄԵՆՔ ՉԵՆՔ ԾՈՌԱՆԱ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ.

ԼԵՆԻՆԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ Ե.

Ամբողջ անկյունը կանաչ ճյուղերով էր զարդարված, իսկ մեջտեղը կախած էր Լենինի պատկերը կարմիր ու սև կտորից շինված շրջանակի մեջ:



Ա Մ Ա Ռ Ը Մ Ե Զ Ն Ո Ւ Մ

98. Յերբ ե լինում

Արևն ե այրում,
խոտը չորանում,
ցորենը հասնում,
հասկերը լցնում:
Այս յերբ ե լինում:

99. Բագրատը գյուղում

1

Իմ հայրը բանվոր եր. մենք ապրում եյինք Թիֆ-
լիսում. ամառները գալիս եյինք մեր գյուղը:

Մի անգամ հորյեղբայրս ասաց.

— Բագրատ ջան, արի քեզ տանեմ սարը, Վառո
նանի մոտ:

Գնացինք, նանս շատ ուրախացավ:

Հորյեղբայրս մի գառ մորթեց, մաշկեց:

— Դու եստեղ կ'աց, Բագր, — ասաց հորյեղբայրս, —
մտիկ արա, վոր շները միսը չտանեն, յես կրակը
թեժացնեմ, խորոզված անեմ:

Միսը դրած եր բարձր սալ քարի վրա, իսկ ներքեն
ընկած եր փորոտիքը: Փայտը ձեռս առա, կանգնեցի,
աղիքներն եյի քաշքշում. մեկ ել 4-5 շուն վրա տվին:

այդ փորոտիքին: Շատ վախեցա. սկզբում ձայնս դուրս
չեր գալիս. հետո բղավեցի: Հորեղբայրս հասավ ու
չոմբախով շներին յետ տվեց: Շները փախան:

— Վա՛յ, քոռանամ, — գոչեց նանը վրանից դուրս
գալով, — երեխես վախեցավ. սպրդնել ա: Առ, ան,
քեզ մատաղ, միքիչ ջուր խմի:

— Չե, ենքան ել չվախեցա... — կմկմացի յես:

— Սարի շներ են, կոպիտ են, բալա ջան, — ասաց
նանը. — ձեր Թիֆլիսի շների պես քաղաքավարի չեն:
Սրանց հետ միշտ պետք ե փայտը ձեռքիդ պահես:

Դրանից հետո շների հետ շատ զգուշ եյի:

2

Մյուս օրը Վառո նանը խնոցի հարեց. ինձ նստաց-
րեց խնոցու վրա ու յերգեց.

«Հարի, հա հարի, խնոցի,

մեջդ ե բարի, խնոցի»:

Խնոցու վրա շատ լավ եյի ճոճվում: Բավականին
հարելուց հետո նանն ինձ իջեցրեց. բաց արեց
խնոցին, նայեց:

— Բագր ջան, ինչ կարագ ե, ձեր Թիֆլիսումը
հո եսպես կարագ չես ուտում. դե, հացդ բեր՝ յե-
ղապատառ տամ:

Հաց ու կարագ կերա, թան ել խմեցի. շներն
եղտեղ եյին. խնոցին շրջապատած պոչերն անհան-
գիստ շարժում եյին: Վառո նանը գուռը թան ածեց.

— Դե լակեք:

Շներն սկսեցին ազահ լակել թանը:

Սարում հովիվների հետ յես գնում եյի հանդը:
Վրաններից շատ հեռանում եյինք: Հովիվը սրինգ եր
ածում, վոչխարները հանգիստ արածում եյին. հե-

տո նա սրնգի յեղանակը փոխում եր, ու վոչխար-
ները գնում եյին դեպի աղբյուրը՝ ջուր խմելու:

Կեսորին բերում եյինք վրանների մոտ, վոր
վոչխարը կթվի:

Այդտեղ յես մնացի յերկու շաբաթ. հետո վերա-
դարձանք Թիֆլիս. շատ շուգ եր. յես միշտ հիշում
եյի սարի հովի ու սառը ջուրը:



100. Ինչ պետք է անել ամառը երսկուրսիայի ժամանակ

1. Հունիսի սկզբներին դիտեցեք գարու և ցորենի
հասկերը: Վճրն ավելի շուտ կհասունանա:
2. Յերբ սկսեցիք ցորենից հեղի պատրաստել:
3. Ի՞նչ թռչունների ձայներ եք լսում դաշտում:
4. Տեսե՞ք՝ ի՞նչ աշխատանքներ են լինում դաշ-
տում և նշանակեցե՞ք այդ աշխատանքների ժամա-
նակը:
5. Փորձեցե՞ք ճանաչել ձեզ պատահած բույսերը:
6. Հավաքեցե՞ք այդ բույսերը և չորացրե՞ք:

101 Արեւ որերը մի՛ կորցնեք

Արեւ շատ առողջարար է մարդու համար:

Բացի ջերմությունից արեւի շողերը մարդուն
ամրացնում են: Շատ հիվանդություններ արեւով
են բժշկում:

Հիվանդները արեւի վանաններ են ընդունում:
Ամառը ամրացրե՞ք ձեր մարմինն արեւով:
Աշխատե՞ք միշտ արեւի տակ լինել:

102. Վորտեղ յեւ ինչպես պիտի յողանալ


Չլողանա՞ք կանգնած, նեխած ու պղտոր ջրում.
ընտրեցե՞ք մաքուր ու պարզ ջուր:

Չլողանա՞ք առավոտը՝ արեւը ծագելուց առաջ, և
յերեկոյան՝ յերբ ոդը խոնավ է լինում:

Յերկար լողանալը փասակար է. 10—15 րոպե
ջուր մնալը բավական է:

103. Չոր ծախողը

Ի՞մ կուլայով այս պուճուր
Չուր եմ ծախում, սառը ջուր.
Չուր գնեցե՞ք, սառը ջուր
Ի՞մ կուլայից այս պուճուր:



104. Կարմիր բանակն ամառանոցում

Կարմիր բանակն ամառանոց եր յեկել: Կարմիր-
բանակայիններն ապրում եյին սպիտակ վրաննե-
րում: Վրանների առաջ ծաղիկներ եյին ցանել, լո-
ղունդներ գրել՝ «Կեցցե ԽՍՀՄ». հեծելագունդը տե-
ղավորված եր ամենածայրը:

Ձիերն առանձին ծածկի տակ էյին:

— Աշոտ, արի՛ գնանք ձիերը տեսնենք, — ասաց Գաղիկը:

— Գնանք:

Գնացինք. ձիերը յերկու շարքով կանգնած էյին կողք-կողքի: Ամեն մեկն իր առանձին մսուրից կանաչ խոտ եր ուտում, փռնչացնում:

— Ե՛յ, ի՞նչ եք ուզում:

Յետ նայեցինք, տեսանք՝ մի մեծ կարմիր-բանակային գլխարկը յետ դրած, կռները քշտած, ցախավելը ձեռքին սրբում եր:

— Վոչինչ, յեկել ենք ձիերը տեսնենք, — ասացինք վախենալով:

Ուզում էյինք փախչենք, բայց նա ժպտաց.

— Լավ, յեկեք նայեք. ես ա ջուրն եմ տանելու, միասին կգնանք:

Մտանք ծածքի տակ: Վորքան ձի կար, զանազան գույնի՝ սպիտակ, սև, կարմիր:

Մեկ-մեկ դուրս հանեց ձիերը, միքանի բանակայիններ յեկան, նստեցին, տարան:

— Ես յերեխաներին ել նստացրեք. թող սովորեն:

Մեզ նստացրին ձիերին. բռնեցինք ձիերի բաշերից, քշեցինք դեպի գետը: Այնտեղ կարմիր-բանակայինները դուլներով ջուր էյին ածում ձիերի վրա, խոզանակներով մաքրում. ձիերի մարմինները փայլում էյին, ձիերը փնչացնում էյին:

Յերևի շոգ որին լողացնելը ձիերին դուր եր գալիս:

Մենք ոգնում էյինք կարմիր-բանակայիններին:

Ձիերը լողացրինք, պրծանք, յետ բերինք. շատ լավ եր:

— Կարելի՞ յե՛ եգուց ել գանք, — հարցրինք:

— Յեկեք, ձեզ մատաղ, — ասաց մեծ կարմիր-բանակայինը. — ուզում եք՝ ամեն որ յեկեք — ես աշխարհը վոր կա, ձեզ համար ե:

— Եքսկուրսիա գնացեք կարմիր-բանակայինների մոտ և ծանոթացեք նրանց կյանքին:

— Ձեր գյուղացիներից քանիսն են կարմիր-բանակում յեղել:

— Իմացեք նրանցից կարմիր բանակի մասին:

105. Հո՛, հո՛, յե՛զ ջան

Հո՛, հո՛, յե՛զ ջան, հո կալ արա,
կալիդ դուրբան, հեյ ընկեր.
հո՛, կալ արա, մի հալ արա,
թեղը դիզենք, ջան ախպեր.
Իրիկուն կուգա, մութը կընկնի,
ասող ու լուսին կբացվին.
հովիկ կուգա, ցուրտը կընկնի,
հո՛, հո՛, մեռնեմ քո ջանին:



106. Կալսելը

Յորենի խուրձերն իրար վրա դարսել էյինք, կալը սրբել, մաքրել:

— Դե՛ յերեխեք ջան, — ասաց հայրս, — քանի լավ որեր են՝ կալսենք, տեղավորենք ցորենը, թե չե անհաց կոտորվեցինք:

Յես, Տիգրանը, Սիրուշը, Չաբել հարսը վրա ընկանք, խուրձերը քանդեցինք, կալումը փռեցինք, հետո կամերը մարագից հանեցինք, յեզները լծեցինք

ու սկսեցինք պատեր Առաջի կամին ձին լծեցինք,
յես նստեցի եղ կամին ու սկսեցի շուտ-շուտ քշել:
— Ճամպան, ճամպան, — ճշում եյի յես ուրախ-ու-
րախ:

— Կամաց, կամաց, ձիուն չմլասես, մի շտապի,
դեռ ենքան կկալես վոր, — ասաց մայրս: Սիրուն
ու Տիգրանն աշխատում եյին առաջ-կտրուկի տալ:
Ամեն մեկն իր կամն եր առաջ գցում:

— Դէհ, խաղը վերջացրեք, — ասաց հայրս, —
հանգիստ քշեք, քյուլաշը շաղ միք տա:

Իրիկունը կալը կալած եր, և հերս ու Զարեկ
հարսն սկսեցին քամուն տալ...

Մենք ել մորս հետ կալը ավելեցինք:

— Դուք ինչպես եք կալում:

— Ինչպես կարելի չե ավելի հեշտ ու արագ կալել:



Յ Ա Ն Կ

ՁԱՄԵՌԸ ՄԵԶՆՈՒՄ

1. Տոն
2. Գրագետը
3. Առաջին ձյունը
4. Ձմեռ
5. Յերբ ե լինում
6. Մեր կազմակերպությունը
7. Մեր որատեսորից
8. Ընտանիքը
9. Հոր ոգնակամը
10. Խելոք հաշիվ
11. Հնարք
12. Կենդանի անկյուն
13. Ընտանի կենդանիներ և
վայրի գաղաններ
14. Ով ինչ ե ուտում
15. Բժշկի զրուցներից
16. Մեր ճաշը
17. Ինչ ե անում մեր սանի-
տարը
18. Մրսելու դեմ
19. Ուրախ ձմեռ
20. Իմ սղղանը
21. Առավոտ
22. Դասից ուշացող աշակերտը
23. Յրտատար ականջներ
24. Ինչ կխնդրեք դիրքը
25. Քուրքը
26. Որատեսորից
27. Վերմակը
28. Ձմռան երսկուրսիան
29. Ձյունը
30. Թռչունների սեղանը
31. Մենակ կապրեմ

32. Իմն ե
33. Հայրը և վորդիները
34. Յեղեմին
35. Ամեն մեկն աշխատում ե բո-
լորի համար
36. Ինչ կարող ե անել կուլեկտիվը
37. Քաջ տղան
38. Գայերի վտանգը
39. Հագուստը
40. Ճախարակ
41. Մեր կոոպերատիվը
42. Գյուղի առուտուրը
43. Գյուղից քաղաք
44. Շարժվող տունը
45. Ելեկտրականություն
46. Կարմիր բանակի տարեդարձը
47. Ով ե Լենինը
48. Պետյայի զբոսանքը
49. Աշակերտի որատեսորից
50. Մեր պսակը Լենինին
51. Լենինի թաղումը
52. Հունվարի 9-ը
53. Վերջին փաթիլները (վոտան.)
54. Անցան (վոտան.)
55. Ձնծաղիկ (վոտան.)
56. Գարուն
57. Յերբ ե լինում (վոտան.)
58. Ինչ պետք ե դիտել գարնանը

ԳԱՐՈՒՆԸ ՄԵԶՆՈՒՄ

59. Հատիկի զարթոնքը
60. Յանքսը
61. Հատիկ (վոտան.)
62. Արոր (վոտան.)

63. Գարուն (վոտան.)
64. Զրվեժ (վոտան.)
65. Զուրը
66. Առվակներ (վոտան)
67. Մեր պարտեզը
68. Մեր պատուհանի պարտեզը
69. Ծառատունկը
70. Գարուն (վոտան)
71. Աշոտի ձեռնափայտը
72. Պահապաններ
73. Պստիկ ծիտը (վոտան.)
74. Մեր բանջարանոցը
75. Պարտեզի և բանջարանոցի
փաստատունները
76. Անճոռնի ճուռիկը
77. Դժվար հանելուկ
78. Կոփ ու գիլագոավը
79. Լորիկ (վոտան.)
80. Թռչունները
81. Վոչխարները
82. Սարի լանջը (վոտան.)
83. Ինչպես մենք խուզվեցինք
84. Մանուշակ
85. Մեղունները
86. Մեղու (վոտան)
87. Մեղու (վոտան)

88. Անկյունում
89. Ընկերոջն ազատելու համար
90. Մեր կոմմունան
91. Պետական ապահովագրու-
թյունը
92. Մայիսը (վոտան.)
93. Մայիսի մեկի մասին
94. Մանկական ինտերնացիոնալ
95. Առաջին խումբը պատրաստ-
վում է դպրոցական ցուցա-
հանդեսի
96. Ա. խումբը դպր. ցուցահան-
դեսում
97. Լենինյան անկյունը ցուցա-
հանդեսում
98. Յերբ ե լինում (վոտան.)
99. Բազմաթիվ գլուխում
100. Ինչ պետք է անել ամառը
երսկուրսիալի ժամանակ
101. Արև որերը մի կորցնեք
102. Վորտեզ և ինչպես պիտի
լողանալ
103. Զուր ծախողը (վոտան.)
104. Կարմիր բանակն ամառա-
նոցում
105. Հո, հո, չեզ ջան (վոտան.)
106. Կարելը



ՀՀ Ազգային գրադարան



NL0246383

9012